ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

## 0602 «ՄԵՆԵՋՄԵՆԹ/ԿԱՌԱՎԱՐՈՒՄ/ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

Ուսումնական հաստատության անվանումը

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ

______________

(ազգանուն, անուն)

«___»__________200_թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Կառավարիչ (մենեջեր) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

որակավորման անվանումը

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ __0602 – Մենեջմենթ/կառավարում/ (ըստ ճյուղերի)

մասնագիտության անվանումը

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ Միջին Մասնագիտական

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ՝ Կառավարիչ (մենեջեր)

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր

*ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՝* *2 տարի*

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝ առկա

## I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| Կուրսը | սեպտեմբեր | | | | | հոկտեմ | | | | նոյեմբեր | | | | դեկտեմբեր | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1–7 | 8–14 | 15–21 | 22–28 | 27.09–5.10 | 6–12 | 13–19 | 20–26 | 27.10–2.11 | 3–9 | 10–16 | 17–23 | 24–30 | 1–7 | 8–14 | 15–21 | 22–28 | 29.12–4.01 |
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | ◊ |
| 3 | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | | |

| Կուրսը | հունվ. | | | | փետրվ | | | | մարտ | | | | | ապրիլ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 5–11 | 12–18 | 19–25 | 26.01–1.02 | 2–8 | 9–15 | 16–22 | 23.02–1.03 | 2–8 | 9–15 | 16–22 | 23–29 | 30.03–5.04 | 6–12 | 13–19 | 20–26 | 27.04–3.05 |
| 1 | :: | = | = | | | | | | | | | | | | | | |
| 2 | :: | = | = | | | | | | | | | | | | | | X |
| 3 | | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | |

| Կուրսը | մայիս | | | | հունիս | | | | | հուլիս | | | | օգոստոս | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4–10 | 11–17 | 18–24 | 25–31 | 1–7 | 8–14 | 15–21 | 22–28 | 29.06–5.07 | 6–12 | 13–19 | 20–26 | 27.07–2.08 | 3–9 | 10–16 | 17–23 | 24–31 |
| 1 | | | | 0 | 0 | 0 | 0 | :: | = | = | = | = | = | = | = | = | = |
| 2 | X | X | : | X | X | X | ▲ | III | III | = | = | = | = | = | = | = | = |
| 3 | | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | |

| Կուրսը | II. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Տեսական ուսուցում | Մոդուլների ամփոփում | Պրակտիկա | Ամփոփիչ պետական ատեստավ. նախապ. | Ամփոփիչ պետական ատեստավորում | Արձակուրդ | ընդամենը |
| 1 | 35 | 2 | 4 | | | 11 | 52 |
| 2 | 27 | 2 | 10 | 1 | 2 | 10 | 52 |
| 3 | | | | | | | |
| Ընդամենը | 62 | 4 | 14 | 1 | 2 | 21 | 104 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 0 | ◊ | X | : : | ▲ | III | = |
| Տեսական ուսուցում | Ուսումնա-կան պրակտիկա տեսական ուսուցմամբ | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման | Նախաավարտական, մասնագիտական պրակտիկա | Մոդուլների ամփոփում | Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման | Ամփոփիչ պետական ատեստավո-րում | Արձակուրդ |

# III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

| N | Առարկաների անվանումը և մոդուլները | Ատեստավորում ըստ կիսամյակների |  |  | Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ) |  |  |  | Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների |  |  |  |  |  |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
|  |  |  |  |  | Պարտադիր լսարանային բեռնվածություն |  |  |  | 1- րդ կուրս |  | 2-րդ կուրս |  | 3-րդ կուրս |  |
|  |  |  |  |  |  | Այդ թվում |  |  |  |  |  |  |  |  |
|  |  | Քննութ. | Ստուգարք | Կուրս. աշխ. | Ընդամենը | Տեսակ. ուսուցում | Լաբոր. և գործն. աշխ | Սեմինար պարապմունք | 1-ին կիս. 18 շաբ | 2-րդ կիս. 17 շաբ. | 3-րդ կիս. 14 շաբ. | 4-րդ կիս. 13 շաբ. | 5-րդ կիս. շաբ. | 6-րդ կիս շաբ. |
| 1. | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
| 1.1 | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ |  | 1; 2տ |  | 72 | 54 | 18 |  | 36 | 36 |  |  |  |  |
| 1.2 | Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ |  | 1;2տ |  | 54 | 48 |  | 6 | 24 | 30 |  |  |  |  |
| 1.3 | Իրավունքի հիմունքներ |  | 2տ |  | 36 | 28 | 8 |  |  | 36 |  |  |  |  |
| 1.4 | Պատմություն |  | 3տ |  | 54 | 48 |  | 6 |  |  | 54 |  |  |  |
| 1.5 | Ռուսաց լեզու |  | 1;2տ |  | 68 |  | 68 |  | 32 | 36 |  |  |  |  |
| 1.6 | Օտար լեզու |  | 1,2տ |  | 68 |  | 68 |  | 34 | 34 |  |  |  |  |
| 1.7 | Ֆիզիկական կուլտուրա |  | 1-4 |  | 124 | 4 | 120 |  | 36 | 34 | 28 | 26 |  |  |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ |  |  |  | **476** | **182** | **282** | **12** | **162** | **206** | **82** | **26** |  |  |
| 2. | ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
| 2.1 | Էկոլոգիայի հիմունքներ |  | 2տ |  | 36 | 28 | 8 |  |  | 36 |  |  |  |  |
| 2.2 | Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր |  | 1 |  | 18 | 18 |  |  | 18 |  |  |  |  |  |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ |  |  |  | **54** | **46** | **8** |  | **18** | **36** |  |  |  |  |
| 3. | ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
| 3.1 | Անվտանգություն և առաջին օգնություն |  | 1տ |  | 36 | 20 | 16 |  | 36 |  |  |  |  |  |
| 3.2 | Համակարգչային հմտություններ-բարձր աստիճան |  | 1տ |  | 36 |  | 36 |  | 36 |  |  |  |  |  |
| 3.3 | «Microsoft Word ծրագիր» |  | 1տ |  | 36 |  | 36 |  | 36 |  |  |  |  |  |
| 3.4 | «Microsoft Excel ծրագիր» |  | 2տ |  | 36 |  | 36 |  |  | 36 |  |  |  |  |
| 3.5 | «Microsoft Access ծրագիր» |  | 3տ |  | 54 | 21 | 33 |  |  |  | 54 |  |  |  |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ |  |  |  | **198** | **41** | **157** |  | **108** | **36** | **54** |  |  |  |
| 4. | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
| 4.1 | Մենեջմենթի ընդհանուր բնութագիրը |  | 1տ |  | 108 | 70 | 38 |  | 108 |  |  |  |  |  |
| 4.2 | Մենեջերի վարքագիծը խմբում և հասարակության մեջ |  | 1տ |  | 108 | 46 | 62 |  | 108 |  |  |  |  |  |
| 4.3 | Ապրանքագիտության հիմունքներ |  | 1տ |  | 54 | 34 | 20 |  | 54 |  |  |  |  |  |
| 4.4 | Շուկայագիտության հիմունքներ |  | 1;2տ |  | 108 | 64 | 44 |  | 36 | 72 |  |  |  |  |
| 4.5 | Տեղեկությունների մշակման վիճակագրական մեթոդներ |  | 1տ |  | 54 | 12 | 42 |  | 54 |  |  |  |  |  |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ |  |  |  | **432** | **226** | **206** |  | **360** | **72** |  |  |  |  |
| 5. | ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
| 5.1 | Առևտրային գործունեության պլանավորումը և կանխատեսումը |  | 2տ |  | 72 | 42 | 30 |  |  | 72 |  |  |  |  |
| 5.2 | Առևտրային գործունեության կազմակերպումը |  | 2տ |  | 72 | 40 | 32 |  |  | 72 |  |  |  |  |
| 5.3 | Առևտրի կազմակերպությունների անձնակազմի գործունեության խթանումը և հսկումը |  | 2տ |  | 72 | 42 | 30 |  |  | 72 |  |  |  |  |
| 5.4 | Կառավարում և առաջնորդում |  | 2;3տ |  | 108 | 48 | 60 |  |  | 46 | 62 |  |  |  |
| 5.5 | Տնտեսաիրավական գիտելիքները և հմտությունները |  | 3;4տ |  | 144 | 86 | 58 |  |  |  | 74 | 70 |  |  |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5.6 | Մենեջերի նյութական և կարգապահական պատասխանատվությունը | | 4տ | | 72 | 42 | 30 | | | | | 72 | | |
| 5.7 | Նյութական, ֆինանսական և ինֆորմացիոն հոսքերի կառավարումը առևտրի կազմակերպությունում (լոգիստիկա) | | 3;4տ | | 144 | 90 | 54 | | | | 70 | 74 | | |
| 5.8 | Առևտրային գործունեության կառավարում (մերչենդայզինգ) | | 3;4տ | | 144 | 72 | 72 | | | | 74 | 70 | | |
| 5.9 | Առևտրային կազմակերպություններում ռիսկերի կառավարում (ռիսկ-մենեջմենթ) | | 3;4տ | | 144 | 82 | 62 | | | | 88 | 56 | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | **972** | **544** | **428** | | | **262** | **368** | **342** | | |
| 6. | ԸՆՏՐՈՎԻ | | **4տ** | | **100** | | | | | | | **100** | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | **2232** | | | | | | | | | |
| | ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | 200 | | | | | | | | | |
| | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ | | | | | | | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | **2232** | **1039** | **1081** | **12** | **648** | **612** | **504** | **468** | | |
| | Շաբաթվա ժամերի քանակը | | | | | | | | 36 | 36 | 36 | 36 | | |

| | IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ | | |
|---|---|---|---|
| 1 | | | |
| 2 | | | |
| | V. ՊՐԱԿՏԻԿԱ | Կիսամյակ | Շաբաթ |
| 1 | Ուսումնական | 2; 3 | 8 |
| 2 | Մասնագիտական | 4 | 3 |
| 3 | Նախաավարտական | 4 | 3 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 14 |

VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

**Առաջին տարբերակ**

Մասնագիտական միջմոդուլային քննություններ՝ Մոդուլ ՄԵՆ-4-08-001-«Մենեջմենթի ընդհանուր բնութագիրը», Մոդուլ ՄԵՆ-4-08-006-«Կառավարում և առաջնորդում», Մոդուլ ՄԵՆ-4-08-008-«Շուկայագիտության հիմունքներ», Մոդուլ ՄԵՆ-4-08-010-«Տնտեսաիրավական գիտելիքները և հմտությունները», Մոդուլ ՄԵՆ-4-08-013-«Առևտրային գործունեության կառավարում (մերչենդայզինգ)»:

**Երկրորդ տարբերակ**

Դիպլոմային աշխատանք (նախագիծ)

| N | VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ |
|---|---|
| | ԿԱԲԻՆԵՏՆԵՐ |
| 1 | օտար լեզուների |
| 2 | հումանիտար և սոցիալ տնտեսագիտական առարկաների |
| 3 | մենեջմենթի |
| 4 | շուկայաբանության |
| 5 | ապրանքագիտության և առևտրի կազմակերպման |
| | |
| | ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ |
| 1 | անհատական համակարգիչների |
| 2 | ուսուցման տեխնիկական միջոցների |
| | ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ |
| 1 | մարզադահլիճ, |
| 2 | մարզահրապարակ, |

## VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին
   առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքները, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին:
   Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/:

Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:

3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ ԱԱՕ- 4 – 08 - 001

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ

Տեսական ուսուցում 20 ժամ
Գործնական պարապմունք՝ 16 ժամ

ՆՊԱՏԱԿԸ

Այս մոդուլը մշակվել է կազմակերպություններում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողներին գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ տալու համար: Այն անհրաժեշտ է կազմակերպության բոլոր մակարդակների աշխատողներին:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական գիտելիքներ պետք չեն:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա՝
1. աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում,
3. արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները,
4. առաջին օգնության կազմակերպումը և անհրաժեշտ միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Գիտի աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները:
բ. Գիտի կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը:
գ. Գիտի աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը:
դ. Գիտի աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:
ե. Գիտի արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը:
զ. Գիտի արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Դասախոսություն: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2
Իմանալ կազմակերպություններում անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ա. Գիտի տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները:
բ. Գիտի էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը:
գ. Գիտի հրդեհանվտանգության կանոնները և պաշտպանությունը:
դ. Գիտի ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ
Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:
Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Դասախոսություն և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 6 ժամ |
| Գործնական աշխատանք՝ | 6 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 3
Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ա. Պատկերացնում է արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները:
բ. Գիտի արտադրական միկրոկլիմայի վերաբերյալ նորմատիվային պահանջները:
գ. Գիտի արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները:
դ. Գիտի արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ
Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից՝ նա պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների՝ նորմաները: Բացի դրանից ուսանողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:
Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի բաղադրիչները.
ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ՝
- ջերմաստիճանը
- հարաբերական խոնավությունը
- փոշու առկայությունը

բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ՝
- օդափոխություն
- ջեռուցում
- ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Դասախոսություն և գործնական աշխատանք: Ուսումնական պրոցեսում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային տեղեկատվական գրականություն, գործիքներ, սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներ անցկացնել արտադրամասում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 6 ժամ |
| Գործնական աշխատանք՝ | 4 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 4
Իմանալ առաջին օգնության կազմակերպումը և անհրաժեշտ միջոցները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ա. Գիտի ճիշտ կատարել արհեստական շնչառություն:
բ. Գիտի ճիշտ կատարել սրտի աշխատանքի վերականգնում:
գ. Գիտի դադարեցնել արյան հոսքը և դնել վիրակապ:
դ. Գիտի կոտրվածքների վիրակապման կարգը:
ե. Ճիշտ է կատարում առաջին օգնությունն այրվածքների դեպքում:
զ. Ճիշտ է կատարում առաջին օգնությունն էլեկտրահարման դեպքում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ
Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը:
Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Դասախոսություն և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 2 ժամ |
| Գործնական աշխատանք` | 6 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ - ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆ»

**Մոդուլի դասիչը`** SS – 4 – 08- 001
**Մոդուլի նպատակը`**
Այս մոդուլը նախատեսում է ուսանողների մոտ զարգացնել առկա համակարգչային տարրական կիրառական գիտելիքները` լրացնելով դրանք Պատուհանների, Ֆայլերի ու Թղթապանակների հետ աշխատանքի ավելի խորացված գիտելիքներով և Ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններով:
**Մոդուլի տևողությունը`** 36 ժամ
**Մուտքային պահանջները`** Չկան
**Ուսումնառության արդյունքները`**
Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.
1. **կճանաչի երկխոսային պատուհանները և կկարողանա օգտագործել դրանք,**
2. **կճանաչի ծրագրերի մենյուները, կիմանա դրանցից օգտվելու ձևերը,**
3. **կիասկանա և կկարողանա օգտագործել My Computer ծրագրի Կտրել (Cut), Պատճենել (Copy), Ներդնել (Paste) գործիքները, կատարել դրանցով Պատճենման և Տեղափոխման գործողություններ, կկարողանա օգտագործել Մկնիկի աջ կոճակի մենյուի Send to հրամանը Պատճենման համար,**
4. **կկարողանա կատարել տեքստային փաստաթղթերի, երաժշտական և գրաֆիկական ֆայլերի որոնման գործողություններ,**
5. **կկարողանա օգտագործել Internet Explorer ծրագիրը, բացել ինտերնետային հասցեներ, կատարել ինֆորմացիայի որոնումներ Ինտերնետ ցանցում, օգտվել էլեկտրոնային փոստից:**
Գնահատման կարգը`
Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. ԵՐԿԽՈՍԱՅԻՆ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ա. ճանաչել երկխոսային պատուհանը, հասկանալ դրա նշանակությունը
բ. տարբերել երկխոսային պատուհանը Windows-ի այլ պատուհաններից
գ. իմանալ երկխոսային պատուհանի օգտագործման առանձնահատկությունները և կառուցվածքային հետևյալ տարրերը` «միակ ընտրության» նշիչ (քառակուսային նշիչ, Check Box), «կամայական ընտրության» նշիչ (շրջանակային նշիչ, Switch Box), կառավարման Yes, No, Cancel կոճակները, տեքստային դաշտ (Text box), թվային դաշտ, ցանկ (List), վերնագիր (Tabs)
դ. իմանալ երկխոսային պատուհանների գործողությունների ելքային արդյունքները
ե. կատարել անցումներ երկխոսային պատուհանի ներսում մկնիկով և ստեղնաշարով
զ. երկխոսային պատուհանների մեջ ճանաչել ակտիվ և պասսիվ կառավարման օրգանները
է. երկխոսային պատուհանների մեջ ճանաչել սահմանազատ ենթատարածքները

ը. իմանալ Ֆայլի և Թղթապանակի հատկությունների (Properties) երկխոսային պատուհանի նշանակությունը

թ. բացել Ֆայլի և Թղթապանակի հատկությունների (Properties) երկխոսային պատուհանը` Մկնիկի աջ կոճակի Properties հրամանով, ստեղնաշարի ALT+ENTER հրամանով, My Computers ծրագրի մենյուի File\Properties հրամանով

ժ. իմանալ Taskbar and Start Menu Properties երկխոսային պատուհանի նշանակությունը

ժա. իմանալ Display Properties երկխոսային պատուհանի նշանակությունը

ժբ. իմանալ Folder Options երկխոսային պատուհանի նշանակությունը

ժգ իմանալ System Properties երկխոսային պատուհանի նշանակությունը

ժդ. իմանալ Date and Time Properties երկխոսային պատուհանի նշանակությունը

ժե. իմանալ Local Disk Properties երկխոսային պատուհանի նշանակությունը

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր երկխոսային պատուհահանների իմացության և օգտագործման գործողությունների վերաբերյալ:Ուսանողից կպահանջվի ցուցադրել երկխոսային պատուհանների հետ կապված գործողությունները, որոնք ձեռք էին բերվել գործնական պարապմունքների ժամանակ: Կտրվեն ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքները անցկացվելու են համակարգչային սենյակներում անմիջապես համակարգչի դեմ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Գործնական պարապմունք` 7 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. ՄԵՆՅՈՒՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճանաչել ծրագրերի մենյուները

բ. բացել ծրագրի մենյուն` մկնիկի օգնությամբ, ստեղնաշարի ALT կոճակի օգնությամբ, ստեղնաշարի ALT+ {մենյուի ընգծված տառ} գործողությամբ

գ. իմանալ Մկնիկի աջ կոճակի բացած ենթատեքստային մենյուի նշանակությունը

դ. իմանալ Մկնիկի աջ կոճակի բացած ենթատեքստային մենյուի հետևյալ հրամանները` View, Arrange Icons By, Refresh, Customize This Folder..., Send To, Properties

ե. փակել ծրագիրը` ստեղնաշարի ALT + F4 կոճակներով, մենյուի File\Exit կամ համարժեք Quit կամ Close հրամաններով, CTRL + ALT + DELETE կոճակներով, Ծրագրերի տողի վրա ծրագրի անունի վրա Մկինիկի աջ կոճակի հարվածով, Close հրամանով

զ. դասակարգել Ֆայլերի և Թղթապանակների Նշանները Arrange Icons By հրամանով` ըստ անունի (Name), ըստ մեծության (Size), ըստ տեսակի (Type), ըստ ձևափոխման ժամանակի (Date)

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր մենյուներից օգտվելու իմացության և դրա տարրերի օգտագործման վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել մենյուներից օգտվելու գործնական պարապմունքների ժամանակ ձեռք բերված կարողությունները և հմտությունները: Կտրվեն ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքները անցկացվելու են համակարգչային սենյակներում` անմիջապես համակարգչի դեմ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Գործնական պարապմունք` 7 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. ՖԱՅԼԵՐԻ ՊԱՏՃԵՆՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. պատճենել (Copy) Ֆայլը և Թղթապանակը՝ My Computer ծրագրի Copy և Paste գործիքներով, ստեղնաշարի CTRL+C և CTRL+V կոճակներով, My Computer ծրագրի մենյուի Edit\Copy և Edit\Paste հրամաններով, Մկնիկի աջ կոճակի օգնությամբ, ենթատեքստային մենյուի Copy և Paste հրամաններով, Ստեղնաշարի CTRL կոճակը սեղմած, Նշանի վրա Մկնիկի ձախ կոճակը սեղմած Նշանը տեղաշարժելով, Նշանի վրա Մկնիկի աջ կոճակը սեղմած Նշանը տեղաշարժելով, բացված ենթամենյուի Copy հրամանով

բ. տեղափոխել (Move) Ֆայլը և Թղթապանակը՝ My Computer ծրագրի Cut և Paste գործիքներով, ստեղնաշարի CTRL+X և CTRL+V կոճակներով, Մկնիկի աջ կոճակի օգնությամբ, ենթատեքստային մենյուի Cut և Paste հրամաններով, My Computer ծրագրի մենյուի Edit \Cut և Edit\Paste հրամաններով, Ստեղնաշարի SHIFT կոճակը սեղմած, Նշանի վրա Մկնիկի ձախ կոճակը սեղմած Նշանը տեղաշարժելով

գ. պատճենել Ֆայլերի ու Թղթապանակների խումբը

դ. տեղափոխել Ֆայլերի ու Թղթապանակների խումբը

ե. պատճենել Ֆայլը և Թղթապանակը Մկնիկի աջ կոճակի բացած ենթատեքստային մենյուի Send to.... հրամանով՝ դեպի My Documents Թղթապանակը, դեպի ճկուն Սկավառակակիրը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր Ֆայլի և Թղթապանակի պատճենման և տեղափոխման հետ կապված գործողությունների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել այս գործողություններից օգտվելու գործնական պարապմունքների ժամանակ ձեռք բերված կարողությունները և հմտությունները: Կարող են կիրառվել գրավոր թեստեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական պարապմունք՝ 7 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. ՈՐՈՆՈՒՄ (SEARCH) ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. իմանալ Որոնման գործողության նշանակությունը

բ. բացել Որոնման պատուհանը՝ Start մենյուի Search\For Files or Folders... հրամանով, My Computer ծրագրի Search գործիքի օգնությամբ, ⊞ + F կոճակների օգնությամբ,

գ. որոնել ըստ տեսակի՝ «Նկարներ, երաժշտություն կամ տեսաֆիլմ» (Pictures, music or video) տեսակ, «Փաստաթղթեր» (Documents) տեսակ

դ. որոնել ըստ ընդհանուր ցուցանիշների՝ ըստ անվանման, ըստ նշված սկավառակակիրի կամ նշված Թղթապանակի, ըստ փաստաթղթի փոփոխման ամսաթվի, ըստ Ֆայլի չափի, ըստ Ֆայլի տեսակի

ե. օգտագործել ? և * ծառայողական սիմվոլները որոնման ընթացքում

զ. դասավորել որոնման արդյունքը՝ ըստ Անվանման (Name), ըստ Հասցեի (In Folder), ըստ Չափի (Size), ըստ Տեսակի (Type), ըստ Փոփոխման ամսաթվի (Date Modified)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր Որոնման գործողության նշանակության և օգտագործման վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել որոնման հիմնական գործողություններից օգտվելու գործնական պարապմունքների ժամանակ ձեռք բերված կարողությունները և հմտությունները: Կտրվեն ընկալունակության և յուրացնելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսուցման տեխնիկական միջոցներ և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական պարապմունք՝ 7 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. ԻՆՏԵՐՆԵՏՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը

բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը

գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը

դ. իմանալ History հրամանի նշանակությունը

ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը

զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը

է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը

ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը

թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից

ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից

ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները՝ միջազգային ծառայություններ՝ Yahoo, Google, Hotbot, Altavista, ռուսական ծառայություններ՝ Rambler, Yandex, Aport, List, հայկական ծառայություններ՝ Port, Gateway

ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա՝ օգտագործելով չափանիշի կոնկրետացումը { “ ” } սիմվոլներով, չափանիշների միավորումը { + } սիմվոլով, չափանիշների բացառումը { - } սիմվոլով

ժգ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն

ժդ. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ

ժե. էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել և ստանալ ֆայլեր

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր ինտերնետում աշխատելու հիմնական գործողությունների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ինտերնետում ցուցադրել և պարզաբանել հիմնական գործողություններից օգտվելու գործնական պարապմունքների աշխատելու ժամանակ ձեռք բերված կարողությունները և հմտությունները, այն են՝բացել ծրագիրը, որևէ կայքը, կարողանալ գտնելառնվազն համապատասխան ինֆորմացիա ըստ տրված հարցումի, ստեղծել էլեկտրոնային փոստի հասցե, ուղարկել և ստանալ նամակներ ու ֆայլեր դրա միջոցով: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր, տեխնիկական միջոցներ և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

## <u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Գործնական պարապմունքներ՝ 8 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «MICROSOFT WORD ԾՐԱԳԻՐ»

**Մոդուլի դասիչը՝** SS-4-08-002

**Մոդուլի նպատակը՝**

Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման և տպագրման հմտությունները:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Մինչև այս մոդուլն ուսումնասիրելը անհրաժեշտ է ուսումնասիրել SS-4-08-001 «Համակարգչային հմտություններ- բարձր աստիճան» մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **հասկանա WORD ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ, կկարողանա փակել WORD ծրագիրը,**
2. **կարողանա կատարել տեքստային փաստաթղթի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ,**
3. **կարողանա պահպանել փաստաթուղթը,**
4. **կարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ,**
5. **կարողանա տեքստային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ,**
6. **կարողանա տպագրել փաստաթուղթը:**

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը՝ Մենյուի տող, Գործիքների տող, Հորիզոնական և Ուղղահայաց Քանոններ, Աշխատանքային տարածք (Թուղթ), Տեքստային Ցուցիչ (Cursor), Ինֆորմացիոն տող, Հորիզոնական և Ուղղահայաց էջատար Սլաքներ (Scroll Bar)

բ. բացել նոր փաստաթուղթ՝ մենյուի File\New հրամանով, ստեղնաշարի CTRL + N կոճակներով, Նոր դատարկ փաստաթուղթ (New Blank Document) գործիքով

գ. ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել՝ տեքստ (առանց ֆորմատավորման), մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ), սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ), թվանշաններ

դ. տեղաշարժել Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ՝ սլաքներով, Home, End, Page Up, Page Down կոճակներով

ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում՝ Delete կոճակի օգնությամբ, Backspace կոճակի օգնությամբ

զ. փակել փաստաթուղթը՝ մենյուի File\Close հրամանով, ստեղնաշարի CTRL + F4 կոճակներով, Փակել (Close) գործիքով

է. բացել առկա փաստաթուղթը՝ մենյուի File\Open հրամանով, ստեղնաշարի CTRL + O կոճակներով, Բացել Փաստաթուղթը (Open) գործիքով

ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր Microsoft Word ծրագրի հիմնական տեղեկությունների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել Microsoft Word ծրագրի հիմնական գործողություններից օգտվելու գործնական պարապմունքների ժամանակ ձեռք բերված կարողությունները և հմտությունները: Կտրվեն ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կիրառվելու են գրավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

## <u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. ՏԵՔՍՏԵՐԻ ՏԱՐՐԱԿԱՆ ՖՈՐՄԱՏԱՎՈՐՈՒՄ

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և ռուսերեն տեքստ մուտքագրելու համար՝ կատարել համապատասխան լեզվի ընտրություն KDWin ծրագրում, կատարել համապատասխան լեզվի տառատեսակի ընտրություն Font գործիքով

բ. նշել բառերը և տեքստային հատվածները՝ մկնիկի կրկնակի շրխկոցով, մկնիկի եռակի շրխկոցով, ընդգծումով, SHIFT կառավարման կոճակի և Left, Right, Up, Down, Home, End, Page Up, Page Down կոճակների օգնությամբ, CTRL + A հրամանով

գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոփոխել տառաչափը Size գործիքի օգնությամբ, փոփոխել տառատեսակը Font գործիքի օգնությամբ, հաստացնել տեքստը Bold գործիքի օգնությամբ, թեքել տեքստը Italic գործիքի օգնությամբ, ընդգծել տեքստը Underline գործիքի օգնությամբ

դ. կատարել տողերի հավասարեցում՝ Align Left, Center, Align Right, Justify գործիքների օգնությամբ, Ctrl+L, Ctrl+R, Ctrl+E, Ctrl+J հրամաններով

ե. փոխել միջտողային տարածությունները՝ Ctrl+1, Ctrl+2, Ctrl+5 հրամաններով, մենյուի Format\Paragraph... հրամանի բացած Paragraph երկխոսային պատուհանի Line Spacing ցանկի Single, 1.5 Line և Double հրամաններով

զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով

է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով

ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից՝ First Line Indent սլաքով, Right Indent սլաքով, Left Tab սլաքով, ստեղնաշարի Ctrl+M, Ctrl+T, Ctrl+Shift+M, Ctrl+Shift+T հրամաններով, մենյուի Format\Paragraph... հրամանի բացած Paragraph երկխոսային պատուհանի Indentation ենթատարածքի Left, Right և Special թվային դաշտերի միջոցով

թ. իմանալ Undo գործիքի նշանակությունը, չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները՝ Undo գործիքով, ստեղնաշարի Ctrl+Z հրամանով, մենյուրի Edit\Undo ... հրամանով

ժ. իմանալ Redo գործիքի նշանակությունը, վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները՝ Redo գործիքով, ստեղնաշարի Ctrl+Y հրամանով

ժա. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը՝ ստեղնաշարի Ctrl+Y հրամանով, մենյուրի Edit\Repeat ... հրամանով

ժբ. Մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ՝ փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ

ժգ. պատճենել տեքստը՝ Copy, Paste գործիքների օգնությամբ, ստեղնաշարի CTRL+C, CTRL+V հրամաններով, մենյուի Edit\Copy և Edit\Paste հրամաններով, Մկնիկի աջ կոճակի Copy և Paste հրամաններով

ժդ. տեղափոխել տեքստը՝ Cut, Paste գործիքների օգնությամբ, ստեղնաշարի CTRL+X, CTRL+V հրամաններով, մենյուի Edit\Cut և Edit\Paste հրամաններով, Մկնիկի աջ կոճակի Cut և Paste հրամաններով

ժե. տողադարձել տեքստը՝ սովորական տողադարձում ( - ) սիմվոլի օգնությամբ, ինքնադասավորվող տողադարձում ստեղնաշարի CTRL+ (-) հրամանով

ժզ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Ուսանողին կտրվեն հարցեր տեքստերի տարրական ֆորմատավորման գործողությունների վերաբերյալ: Կառաջադրվի հավաքել թոքր ծավալով տեքստ և դրա վրա ցուցադրել տեքստերի ֆորմատավորման գործնական պարապմունքների աշխատելու ժամանակ ձեռք բերված կարողությունները և հմտությունները: Կտրվեն ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կկիրառվեն գրավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը

բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը Save As... պատուհանի օգնությամբ՝ իմանալ File Name տեքստային դաշտի նշանակությունը, իմանալ Save As Type ցուցակի նշանակությունը, ընտրել փաստաթղթի պահպանման տեղը՝ օգտագործելով Save in, My Places, Up, Back գործիքները

գ. իմանալ փաստաթղթի ընթացիկ պահպանման նշանակությունը, պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները՝ Save գործիքի օգնությամբ, ստեղնաշարի CTRL+S հրամանով, մենյուի File\Save հրամանով

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Ուսանողին կտրվեն հարցեր փաստաթղթերի պահպանման իմաստի, նշանակության և ձևերի վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել փաստաթղթերի պահպանման գործողություններից օգտվելու կարողությունները և հմտությունները՝ ձեռք բերված գործնական պարապմունքների ժամանակ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԽՄԲԱԳՐՈՒՄ**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. պատրաստել աղյուսակ՝ Insert Table գործիքով, մենյուի Table\Insert\Table... հրամանով

բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ

գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ

դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ՝ մենյուի Table\Insert պատուհանի հրամաններով, Copy և Paste գործիքների օգնությամբ, տողը կամ սյունը նշելու դեպքում Insert Table գործիքով, նշված տողի կամ սյան վրա Մկնիկի աջ կոճակը խփելով, բացված ենթատեքստային մենյուի Insert Rows կամ Insert Columns հրամաններով

ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները՝ մենյուի Table\Delete պատուհանի հրամաններով, Cut գործիքի օգնությամբ, նշված տողի կամ սյան վրա Մկնիկի աջ կոճակը խփելով, բացված ենթատեքստային մենյուի Delete Rows կամ Delete Columns հրամաններով

զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ

է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ

ը. փոխել աղյուսակի գծերի գույնը՝ Border Color և Borders գործիքների միջոցով, Border Color և Draw Table գործիքների միջոցով

թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը Shading Color գործիքով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր աղյուսակների պատրաստման և խմբագրման վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի պատրաստել աղյուսակ, մուտքագրել տեքստ, խմբագրել աղյուսակը, գունավորել աղյուսակի տողը և սյունը՝ այդպիսով ցուցադրել աղյուսակների պատրաստման և խմբագրման գործնական պարապմունքների ժամանակ ձեռք բերված կարողությունները և հմտությունները: Կտրվեն ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ձևաթղթեր, ձևաչափեր, ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒՄ ԵՎ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ Draw, Line, Arrow, Rectangle, Oval գործիքներով

բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը

գ. գծագրել կանոնավոր պատկերներ՝ օգտագործելով SHIFT ստեղնը

դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ, պատճենել, պտտել, շրջել, փոխել չափերը

ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները

զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ

է. գծագրել տեքստային բլոկներ

ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները Fill Color գործիքով

թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները Fill Color գործիքի Fill Effect.s... հրամանով

ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները Shadow Style գործիքով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր գրաֆիկական խմբագրման և նկարազարդման գործողությունների վերաբերյալ: Կպահանջվի գծագրել որևէ պարզ օբյեկտ/նկար, ֆորմատավորել գրաֆիկական այս օբյեկտները/նկարը, կատարել այլ հիմնական գործողություններ՝ ցուցադրելով գրաֆիկական օբյեկտների գծագրելու, խմբագրելու և գունավորելու կարողությունները և հմտությունները ձեռք բերված գործնական պարապմունքների ժամանակ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր, ձևաթղթեր, ձևաչափեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏՊԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. իմանալ Նախադիտման (Print Preview) ռեժիմի նշանակությունը

բ. Նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը

գ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները՝ Name ցուցակով ընտրել տպիչը, Page Range կոճակներով ընտրել տպվող էջերը, Number of Copies թվային վանդակով ընտրել տպագրվող օրինակների քանակը, Properties կոճակով փոփոխել տպագրության որակը

դ. տպագրել փաստաթուղթը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր Նախադիտման ռեժիմի և Print պատուհանի նշանակության, դրանց ֆունկցիաների գործողությունների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի տպագրել փաստաթուղթ ըստ որոշ պայմանների՝ ցուցադրելով Նախադիտական ռեժիմի և Print պատուհանի տարրերի գրագետ օգտագործման կարողությունները և հմտությունները՝ ծեռքբերված գործնական պարապմունքների ժամանակ: Կարող են կիրառվել գրավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>**

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

**<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>**

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «MICROSOFT EXCEL ԾՐԱԳԻՐ»

**Մոդուլի դասիչը՝** SS-4-08-003

**Մոդուլի նպատակը՝**

Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT EXCEL աղյուսակային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել աղյուսակային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման տարրական հմտությունները:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ գործնական պարապմունքներ

**Մուտքային պահանջները՝** SS-4-08-001- «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ - ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆ»

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **հասկանա EXCEL ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել Նշիչը աղյուսակի մեջ, կկարողանա փակել EXCEL ծրագիրը,**
2. **կարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ, կատարել տեքստի և թվերի մուտքագրում, խմբագրում, ֆորմատավորում, աղյուսակի տողերի ու սյուների ֆորմատավորում, կկարողանա օգտագործել տարբեր ֆորմատների տվյալներ,**
3. **կարողանա օգտագործել Պատճենման և Տեղափոխման գործողությունները աղյուսակի մեջ, կատարել ինքնալրացման, տվյալների դասակարգման և ֆիլտրացիայի գործողությունները, կկարողանա կազմել տարրական մաթեմատիկական բանաձևեր պարունակող աղյուսակներ,**
4. **կարողանա պահպանել փաստաթուղթը,**
5. **կարողանա տպագրել փաստաթուղթը:**

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար ապահովումն է:

### ԱՐԴՅՈՒՆՔ 1. EXCEL ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. իմանալ Microsoft Excel ծրագրի պատուհանի կառուցվածքը՝ Մենյուի տող, Գործիքների տող, Բանաձևերի տող, Տողերի և Սյուների համարակալումներ, Աշխատանքային տարածք (Թուղթ), Թերթ (Worksheet), Նշիչ (Cursor), Ինֆորմացիոն տող, Էջատար Սլաքներ (Scroll Bar)

բ. բացել նոր փաստաթուղթ՝ մենյուի File\New հրամանով, ստեղնաշարի CTRL + N կոճակներով, Նոր դատարկ փաստաթուղթ (New Blank Document) գործիքով

գ. տեղաշարժել Նշիչը աղյուսակի մեջ՝ ստեղնաշարի սլաքներով, մկնիկով, Home, End, Page Up, Page Down կոճակներով, CTRL + Home, CTRL + End կոճակներով

դ. փակել փաստաթուղթը՝ մենյուի File\Close հրամանով, ստեղնաշարի CTRL + F4 կոճակներով, Փակել (Close) գործիքով

ե. բացել առկա փաստաթուղթը՝ մենյուի File\Open հրամանով, ստեղնաշարի CTRL + O կոճակներով, Բացել (Open) գործիքով

զ. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր Microsoft Excel ծրագրի հիմնական տեղեկությունների,մասնավորապես՝ ծրագրի պատուհանի կառուցվածքի և դրա հիմնական տարրերի նշանակության և ֆունկցիաների գործողությունների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել Excel ծրագրի պատուհանում գրագետ գործողությունների կատարումը՝ ձեռքբերված գործնական պարապմունքների ժամանակ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են h համակարգչային սենյակներում` անմիջապես համակարգչի դեմ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Գործնական պարապմունք` 7 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ, ԽՄԲԱԳՐՄԱՆ ԵՎ ՖՈՐՄԱՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել` տեքստ (առանց ֆորմատավորման), մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ), սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ), թվանշաններ

բ. իմանալ «Վանդակի հասցե» հասկացությունը

գ. ջնջել աղյուսակի վանդակի պարունակությունը` Delete կոճակի օգնությամբ, Backspace կոճակի օգնությամբ, տեքստի անմիջական մուտքագրումով

դ. կատարել աղյուսակի վանդակում տարրական ուղղումներ` F2 կոճակով, Մկնիկի կրկնակի հարվածով, Բանաձևերի տողի օգնությամբ

ե. նշել` վանդակների միջակայք մկնիկի օգնությամբ, վանդակների միջակայք ստեղնաշարի SHIFT կոճակի օգնությամբ, ամբողջ սյունակը, ամբողջ տողը, հաջորդական կամ ոչ հաջորդական տողեր, սյունակներ, վանդակներ, բոլոր վանդակները CTRL + A կոճակներով

զ. ֆորմատավորել մուտքագրված տեքստը` փոփոխել տառաչափը Size գործիքի օգնությամբ, փոփոխել տառատեսակը Font գործիքի օգնությամբ, հաստացնել տեքստը Bold գործիքի օգնությամբ, թեքել տեքստը Italic գործիքի օգնությամբ, ընդգծել տեքստը Underline գործիքի օգնությամբ, գունավորել տեքստը Font Color գործիքով, շրջանակել վանդակը Borders գործիքով, կատարել տեքստի հավասարեցում Left, Center, Right գործիքներով

է. իմանալ տվյալների Ֆորմատի ձևերը` Ընդհանուր ձևի ֆորմատ, Թվային ֆորմատ, Տեքստային ֆորմատ, Տարադրամային ֆորմատ, Օրացուցային ֆորմատ

ը. փոխել տվյալների Ֆորմատը Մենյուի Format\Cells... հրամանով

թ. ֆորմատավորել աղյուսակի սյունը և տողը` փոփոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ, փոփոխել տողի բարձրությունը Մենյուի Format\Row\Height... հարմանով, փոփոխել սյան լայնությունը Մկնիկի օգնությամբ, փոփոխել սյան լայնությունը Մենյուի Format\Column\Width... հրամանով, գունավորել տողը կամ սյունակը Fill Color գործիքով

ժ. կատարել գործողություններ Թերթի (Worksheet) հետ` մտցնել նոր Թերթ մենյուի Insert\Worksheet հրամանով, ջնջել Թերթը Edit\Delete Sheet հրամանով, Պատճենել կամ Տեղափոխել Թերթը Մենյուի Edit\Move or Copy Sheet հրամանով, անվանափոխել Թերթը Մենյուի Format\Sheet\Rename հրամանով, թաքցնել Թերթը Մենյուի Format\Sheet\Hide հրամանով

ժա. ավելացնել նոր տող (տողեր) Մենյուի Insert\Row հրամանով

ժբ. ավելացնել նոր սյուն (սյուներ) Մենյուի Insert\Column հրամանով

ժգ. ջնջել տողը (տողերը) և սյունը (սյուները) Մենյուի Edit\Delete... հրամանով

ժդ. իմանալ Մասշտաբ (Zoom) գործիքը

ժե. միավորել վանդակները` Merge and Center գործիքով, Մենյուի Format\Cells...\Alignment\Merge Cells հրամանով

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր Microsoft Excel ծրագրում աղյուսակների հետ աշխատելու գործողությունների վերաբերյալ: Ուսանողին կառաջադրվի հանձնարարություն` հիմք ունենալով, որպեսզի նա ցուցադրի Excel ծրագրի միջոցով աղյուսակների ստեղծման, տվյալների մուտքագրման, խմբագրման և ֆորմատավորման գործողությունների կարողությունները` ձեռքբերված գործնական պարապմունքների ժամանակ: Կարող են կիրառվել գրավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ձևաթղթեր, ձևաչափեր, ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում` անմիջապես համակարգչի դեմ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Գործնական պարապմունք` 7 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. ԱՂՅՈՒՍԱԿԻ ՄԵՋ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՏՃԵՆՄԱՆ ՈՒ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ԻՆՔՆԱԼՐԱՑՄԱՆ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. պատճենել աղյուսակային տվյալները՝ Copy, Paste գործիքների օգնությամբ, CTRL + C, CTRL + V հրամաններով, Մկնիկի օգնությամբ

բ. տեղափոխել աղյուսակային տվյալները՝ Cut, Paste գործիքների օգնությամբ, CTRL + X, CTRL + V հրամաններով, Մկնիկի օգնությամբ

գ. կատարել տվյալների Ինքնալցման գործողություն՝ Մկնիկի օգնությամբ, Մենյուի Edit\Fill Պատուհանի հրամաններով, CTRL + D կամ CTRL + R կոճակներով

դ. դասակարգել աղյուսակային տվյալները՝ Sort Ascending և Sort Descending գործիքներով, մենյուի Data\Sort... հրամանով

ե. կատարել տվյալների Ֆիլտրացիա մենյուի Data\Filter\Autofilter հրամանով

զ. կազմել մաթեմատիկական բանաձևեր

է. կատարել հաշվարկներ, օգտագործելով գումարման, հանման, բազմապատկման և բաժանման գործողությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր Microsoft Excel ծրագրում տարրական գործողությունների և մաթեմատիկական բանաձևերի կազմման վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել Excel ծրագրի միջոցով աղյուսակներում տվյալների պատճենման, տեղափոխման, ինքնալցման, դասակարգման և ֆիլտրացման գործողությունների կատարումը՝ ծեռքբերված գործնական պարապմունքների ժամանակ, ինչպես նաև մաթեմատիկական բանաձևերի կազմման և տարրական հաշվարկների կատարման կարողությունները և հմտությունները: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կկիրառվեն գրավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ծեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ձևաթղթեր, ձևաչափեր, ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքերն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. իմանալ փաստաթղթերի պահպանման նշանակությունը:

բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը Save As... պատուհանի օգնությամբ՝ բացատրել File Name տեքստային դաշտի նշանակությունը, բացատրել Save As Type ցուցակի նշանակությունը, կատարել փաստաթղթի պահպանման տեղի ընտրություն, օգտագործելով Save in, My Places, Up, Back գործիքները

գ. կատարել փաստաթղթի ընթացիկ պահպանում՝ Save գործիքի օգնությամբ, CTRL+S հրամանով, մենյուի File\Save հրամանով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր Excel ծրագրում փաստաթղթերի պահպանման իմաստի, նշանակության և ձևերի վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել փաստաթղթերի պահպանման գործողություններից օգտվելու կարողությունները և հմտությունները՝ ծեռքբերված գործնական պարապմունքների ժամանակ: Կարող են կիրառվել գրավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ծեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական պարապմունք՝ 7 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏՊԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. իմանալ Նախադիտման (Print Preview) ռեժիմի նշանակությունը

բ. իմանալ Նախադիտման ռեժիմի կոճակների նշանակությունը՝ Նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը Next և Previous կոճակներով, փոխել փաստաթղթի Մասշտաբը Zoom կոճակով, տպագրել փաստաթուղթը Print... կոճակով, ֆորմատավորել թերթը Setup... կոճակով, փոփոխել լուսանցքները Margins կոճակով, բացել և օգտագործել էջերի Ձեռքով Սահմանազատման (Page Break Preview) և էջերի Ավտոմատ Սահմանազատման (Normal View) ռեժիմները, ճանաչել էջերի Սահմանազատման գծերը Թերթի մեջ

գ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները՝ Name ցուցակով կատարել պրինտերի ընտրությունը, Page Range կոճակներով կատարել տպագրվելիք էջերի ընտրությունը, Number of Copies թվային վանդակով ընտրել տպագրվող օրինակների քանակը, Properties կոճակով փոփոխել տպագրության որակը

դ. տպագրել փաստաթուղթը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր Excel ծրագրում Նախադիտման ռեժիմի և Print պատուհանի նշանակության, դրանց ֆունկցիաների գործողությունների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի տպագրել փաստաթուղթ ըստ որոշ պայմանների՝ ցուցադրելով Նախադիտման ռեժիմի և Print պատուհանի տարրերի գրագետ օգտագործման կարողությունները և հմտությունները՝ ծեռքբերված գործնական պարապմունքների ժամանակ: Կարող են կիրառվել գրավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ծեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Գործնական պարապմունքներ՝ 7 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «MICROSOFT ACCESS ԾՐԱԳԻՐ»

**Մոդուլի դասիչը՝** **SS-4-08-004**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տարրական գիտելիքներ MICROSOFT ACCESS տվյալների բանկի կառավարման համակարգի մասին, զարգացնել ուսանողի մոտ տվյալների բանկերի պատրաստման, խմբագրման, ձևավորման, դրանց ֆորմատավորման ու օգտագործման տարրական հմտությունները:

**Մոդուլի տևողությունը՝** **54 ժամ**

Տեսական ուսուցում 21 ժամ

Գործնական աշխատանք 33 ժամ

**Մուտքային պահանջները՝** **SS-4-08-003 «MICROSOFT EXCEL ծրագիր»**

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **պատկերացում կազմի տվյալների բանկի և դրանց կառավարման համակարգի մասին,**
2. **կարողանա կազմել տվյալների բանկը, աղյուսակը խմբագրել տվյալները աղյուսակներում,**
3. **կարողանա կազմել "ձևեր" օբյեկտի տեսակը, կատարել անհրաժեշտ գործողություններ,**
4. **կարողանա ստանալ տվյալների բանկից անհրաժեշտ գրառումները հարցումների միջոցով,**
5. **կարողանա ստեղծել հաշվետվություններ Access ծրագրի միջոցով:**

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կազմել պատկերացում տվյալների բանկի և դրանց կառավարման համակարգի մասին

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է հասկանում և շարադրում «տվյալների բանկի» հասկացությունը,

բ. ճիշտ է ներկայացնում տվյալների բանկի կառուցվածքը և ծրագրավորումը,

գ. ճիշտ է նկարագրում "MICROSOFT ACCESS տվյալների բանկի կառավարման համակարգը", դրա նպատակը ու դերը,

դ. ճիշտ է ներկայացնում կապերը, աղյուսակների միջև դրանց տեսակները տվյալների բանկում,

ե. ճիշտ է նկարագրում Access ծրագրի օբյեկտների տեսակները մասնավորապես՝ աղյուսակներ, հարցումներ, ձևեր, հաշվետվություններ, մակրոսներ և մոդուլներ,

զ. ճիշտ է բացում Access ծրագիրը և ներկայացնում ծրագրի պատուհանի հիմնական բաղադրիչները և դրանց ֆունկցիաները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր տվյալների բանկի, դրանց կառուցվածքի, դերի, ինչպես նաև Access ծրագրի նշանակության, օբյեկտների տեսակների և դրանց օգտագործման վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել ծրագրի հետ աշխատելու սկզբնական քայլերի կարողությունները և հմտությունները՝ ձեռքբերված գործնական պարապմունքների ընթացքում: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ծեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքերն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 5 ժամ

Գործնական պարապմունք՝ 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանալ կազմել տվյալների բանկը, աղյուսակը, խմբագրել տվյալները աղյուսակներում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա.ճիշտ է բացում Access ծրագրի օբյեկտների “աղյուսակ” տեսակը,

բ.ճիշտ է ներկայացնում այս կամ այն աղյուսակի ստեղծման հնարավոր միջոցները:

գ ճիշտ է կարգադրում“աղյուսակի” տարրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները և եղանակները,

դ. ճիշտ է մուտքագրում տվյալները աղյուսակի մեջ, որոշում աղյուսակի վանդակների հատկությունները և չափսերը,

ե. ճիշտ է խմբագրում տվյալները աղյուսակներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր Access ծրագրի օբյեկտների “աղյուսակ” տեսակի, դրա կառուցվածքի, դերի, նշանակության վերաբերյալ: Ուսանողին կառաջադրվի հանձնարարություն ցուցադրել “աղյուսակ” օբյեկտի տեսակի բացման, ստեղծման, տվյալների մուտքագրման, սյուների ու տողերի հատկությունների կարգադրման, ինչպես նաև աղյուսակներում տվյալների խմբագրման հետ կապված կարողությունները և հմտությունները՝ ձեռքբերված գործնական պարապմունքների ընթացքում: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքերն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 7 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանալ կազմել “ձևեր” օբյեկտի տեսակը, կատարել անհրաժեշտ գործողություններ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է իմանում “ձևեր” օբյեկտի տեսակի հիմնական դերը հնարավորությունները, դրական կողմերը և ստեղծման միջոցները,

բ. ճիշտ է ստեղծում և ընտրում “ձևերի” տիպերը, տարբերակում այս կամ այն “ձևի” առանձնահատկությունները և հարմարավետությունը,

գ. ճիշտ է մուտքագրում ու խմբագրում տվյալները “ձևերի մեջ,

դ. ճիշտ է պատրաստում “ձևը” տպման համար տպում նախընտրած “ձևը” կամ “ձևի” որոշ տողերը,

ե. ճիշտ է տեսակավորում գրառումները “ձևերի” մեջ, հետ առնում կատարված տեսակավորումը,

զ. ճիշտ է որոնում գրառումները տալով անհրաժեշտ հատկություններ, օգտագործում փոխարինող սիմվոլները,

է ճիշտ է ներկայացնում գրառումների ֆիլտրացման դերը և ֆիլտրերի ստեղծման միջոցները, կիրառում տրված գիտելիքները գործնականում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր Access ծրագրի օբյեկտների “ձևեր” տեսակի, դրա դերի, նշանակության և ստեղծման միջոցների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել “ձևեր” օբյեկտի տեսակի բացման, ստեղծման, ձևի ընտրման, տվյալների մուտքագրման, խմբագրման, ինչպես նաև տպման, տեսակավորման, ֆիլտրացման հետ կապված կարողությունները և հմտությունները՝ ձեռքբերված գործնական պարապմունքների ընթացքում: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքերն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 7 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանալ ստանալ տվյալների բանկից անհրաժեշտ գրառումները հարցումների միջոցով:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում Access ծրագրի "հարցումներ" օբյեկտի տեսակի հիմնական դերը և տիպերը,

բ. ճիշտ է նկարագրում և առանձնացնում "հարցումների" տարբեր միջոցները, ստեղծում հարցումները,

գ. ճիշտ է ներմուծում փոփոխությունները հարցումների կառուցվածքի մեջ,

դ. ճիշտ է օգտագործում հարցումների միջոցով տրված տվյալների տեսակավորումը,

ե. ճիշտ էտպում հարցումները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր Access ծրագրի օբյեկտների "հարցումների տեսակի դրա դերի, նշանակության, տիպերի և ստեղծման միջոցների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել "հարցումներ" օբյեկտի տեսակի բացման, ստեղծման, փոփոխման, տպման, տեսակավորման հետ կապված կարողությունները և հմտությունները՝ ձեռքբերված գործնական պարապմունքների ընթացքում: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 7 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարողանալ ստեղծել հաշվետվություններ Access ծրագրի միջոցով:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում Access ծրագրի "հաշվետվություն" օբյեկտի տեսակի հիմնական դերը և ստեղծման միջոցները,

բ. ճիշտ է բացում "հաշվետվություն" ծրագրի օբյեկտի տեսակի պատուհանը, ընտրում անհրաժեշտ ներկայացման տեսակը և ստեղծում հաշվետվությունը,

գ. ճիշտ է պատկերացնում հաշվետվության կառուցվածքը, խմբագրում, նկարազարդում և ֆորմատավորում տվյալները հաշվետվության միջոցով,

դ. ճիշտ է ավելացնում և ջնջում հաշվետվության կառավարման տարրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր Access ծրագրի օբյեկտների "հաշվետվության" տեսակի, դրա դերի նշանակության, տեսակի և ստեղծման միջոցների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ցուցադրել "հաշվետվության" օբյեկտի տեսակի բացման, ստեղծման, տվյալների խմբագրման, նկարազարդման և ֆորմատավորման, ինչպես նաև տպման և այլոց հետ կապված կարողությունները և հմտությունները՝ ձեռքբերված գործնական պարապմունքների ընթացքում: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքներն անցկացվելու են համակարգչային սենյակներում՝ անմիջապես համակարգչի դեմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 7 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ»

**Մոդուլի դասիչը՝** ՄԵՆ-4-08-001

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել պատկերացում մենեջմենթի, որպես գիտության մասին, տալ ընդհանուր գիտելիքներ և հմտություններ մենեջմենթի նպատակների, խնդիրների ու սկզբունքների,

մենեջմենթի առարկայի, օբյեկտի ու սուբյեկտի, մենեջմենթի ֆունկցիաների ու մակարդակների, նաև ղեկավարողի դերերի մասին: Հատուկ ուշադրություն կդարձվի առևտրի մենեջմենթին, կներկայացվեն նրա նպատակներն ու խնդիրները, կկոնկրետացվեն նրա գործունեության առարկան ու օբյեկտը

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կիմանա մենեջմենթի զարգացման և ձևավորման հիմնական փուլերը, մենեջմենթի հիմնական տեսական ուսմունքները և դպրոցները: Սովորողը պետք է իմանա, թե ինչպիսի առարկաների և գիտությունների հետ է առնչվում մենեջմենթը, որոնք են մենեջմենթի և ուրիշ առարկաների ու գիտությունների ընդհանուր բաժինները (հոգեբանություն, սոցիոլոգիա, փիլիսոփայություն, մանկավարժություն, էթիկա, կուլտուրոլոգիա և այլն):

**Մոդուլի տևողությունը՝** **108 ժամ**

Տեսական ուսուցում 70 ժամ

Գործնական աշխատանք 38 ժամ

**Մուտքային պահանջները՝** **Չկան**

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **պատկերացում կազմի մենեջմենթի, որպես ժամանակակից գիտության մասին,**
2. **իմանա մենեջմենթի նպատակները, խնդիրները և սկզբունքները,**
3. **կարողանա տարբերակել մենեջմենթի առարկան, օբյեկտը և սուբյեկտը,**
4. **իմանա մենեջմենթի հիմնական գործառույթները, մակարդակները և ղեկավարողի դերերը,**
5. **իմանա առևտրի մենեջմենթի նպատակները, խնդիրները և ուղղությունները, կոնկրետացնի նրա գործունեության առարկան և օբյեկտը,**
6. **պատկերացում կազմի մենեջմենթի ստեղծման նախապայմանների վերաբերյալ, իմանա մենեջմենթի զարգացման հիմնական փուլերը և տրամաբանությունը, իմանա մենեջմենթի հիմնական դպրոցները և ուսմունքները,**
7. **իմանա մենեջմենթի հարակից առարկաները, նաև հումանիտար գիտությունների հետ մենեջմենթի ընդհանուր բաժինները:**

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կազմել պատկերացում մենեջմենթի, որպես ժամանակակից գիտության մասին**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է հասկանում և շարադրում «մենեջմենթ» հասկացությունը,

բ. ճիշտ է ներկայացնում իր աշխատանքը, պարտականությունները և պարտավորությունները:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր «մենեջմենթի» որպես ժամանակակից գիտության մասին: Ուսանողին կառաջադրվի որպես ապագա մենեջեր նկարագրել իր աշխատանքը, պարտականությունները և պարտավորությունները: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են դերային խաղեր: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ մենեջմենթի նպատակները, խնդիրները և սկզբունքները**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է ներկայացնում մենեջմենթի հիմնական նպատակը.

բ. ճիշտ է նկարագրում մենեջմենթի հիմնական խնդիրները.

գ. ճիշտ է ներկայացնում մենեջմենթի հիմնական կանոնները և սկզբունքները:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր մենեջմենթի հիմնական սկզբունքների, նպատակների և խնդիրների վերաբերյալ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը գրավոր կամ բանավոր ճիշտ պատասխանի տրված բոլոր հարցերին:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ մենեջմենթի հիմնական սկզբունքների,

նպատակների և խնդիրների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր, ուսումնական և մեթոդական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 12 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանալ տարբերակել մենեջմենթի առարկան, օբյեկտը և սուբյեկտը**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում մենեջմենթի առարկան.

բ. ճիշտ է տարբերակում մենեջմենթի օբյեկտը սուբյեկտից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր մենեջմենթի առարկայի վերաբերյալ, կպահանջվի տարբերակել մենեջմենթի օբյեկտը սուբյեկտից և բերել օրինակներ: Կտրվեն ընկալունակության կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ մենեջմենթի առարկայի, օբյեկտի և սուբյեկտի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ մենեջմենթի հիմնական գործառույթները, մակարդակները և ղեկավարի դերերը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում մենեջմենթի գործառույթները,

բ. ճիշտ է առանձնացնում մենեջմենթի մակարդակները, կարողանում է այս կամ այն գործառույթը համապատասխանեցնել ստույգ մակարդակին,

գ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի դերերը միջանձնային ինֆորմացիան, որոշումներ ընդունելու վերաբերյալ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր մենեջմենթի գործառույթների և մակարդակների վերաբերյալ: Կառաջարկվի նկարագրել այս կամ այն գործառույթը, համապատասխանեցնել ստույգ մակարդակին: Կպահանջվի սահմանել ցանկացած կազմակերպության մենեջերի աշխատանքի ծավալը ու պարունակությունը ըստ այս կամ այն ղեկավարի դերի: Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ մենեջմենթի գործառույթների, մակարդակների և ղեկավարման դերերի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն, սեմինարներ: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 12 ժամ

Գործնական պարապմունք 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Իմանալ առևտրի մենեջմենթի նպատակները, խնդիրները և ուղղությունները, կոնկրետացնել նրա գործունեության առարկան և օբյեկտը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում առևտրի մենեջմենթի էությունը, կոնկրետացնում այս գաղափարի հիմնական գծերը,

բ. ճիշտ է առանձնացնում առևտրի մենեջմենթի նպատակները, խնդիրները և ուղղությունները,

գ. ճիշտ է ներկայացնում առևտրի մենեջմենթի գործունեության առարկան և օբյեկտը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր առևտրի մենեջմենթի, մասնավորապես՝ դրա էության, նպատակների, խնդիրների և ուղղությունների, ինչպես նաև առարկայի և օբյեկտի վերաբերյալ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ և հմտություններ առևտրի մենեջմենթի հիմնական հասկացողությունների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 10 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 6 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կազմել պատկերացում մենեջմենթի ստեղծման նախապայմանների վերաբերյալ, իմանա մենեջմենթի զարգացման հիմնական փուլերը և տրամաբանությունը, իմանա մենեջմենթի հիմնական դպրոցների և ուսմունքների մասին:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է պատկերացնում ստեղծման և զարգացման նախապայմանները և տրամաբանությունը,

բ. ճիշտ է տիրապետում կառավարման դպրոցների և հիմնական ուսմունքների պատմության, սկզբունքների և մենեջմենթի հետագա զարգացման ազդեցության մասին,

գ. ճիշտ է պատկերացնում մենեջմենթի խնդիրները, որոնք կանգնած են ղեկավարման տեսության ժամանակակից փուլի զարգացման վրա:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Սովորողին կհանձնարարվի շարադրել այս կամ այն կառավարման դպրոցի հիմնական սկզբունքները և մոտեցումները, պարզաբանել այս կամ այն ուսմունքի զարգացման նախապայմանները և տրամաբանությունը: Կառաջադրվի տալ լուծումներ կառավարման տեսության ժամանակակից խնդիրներին և պրոբլեմներին: Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն, սեմինարներ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 10 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 6 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 7. Իմանալ մենեջմենթի հարակից առարկաները, նաև մենեջմենթի այն բաժինները, որոնք ընդհանուր են հումանիտարի հետ:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է պատկերացնում թե որ գիտությունները, և հատկապես տվյալ գիտությունների որ բաժինները ունեն մենեջմենթի հետ շփման կետեր.

բ. ճիշտ է պատկերացնում այլ գիտությունների դերը մենեջմենթում, մասնավորապես հումանիտար (հոգեբանության, փիլիսոփայության, էթիկա, սոցիոլոգիա, մանկավարժության, մշակութաբանություն և այլն) առարկաների.

գ. ճիշտ է գնահատում այս կամ այն հումանիտար գիտության ազդեցությունը մենեջմենթի վրա.

դ. ճիշտ է կիրառում հումանիտար գիտությունների մեթոդները և մոտեցումները կառավարման խնդիրները լուծելու համար:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Կտրվեն հարցեր այն վերաբերյալ, թե ինչ դեր և ազդեցություն ունեցան տարբեր հումանիտար գիտությունները մենեջմենթի, որպես գիտություն, ծագման ու գոյացման վրա: Ուսանողին կներկայացվի որևէ իրավիճակ, կապված կառավարման խնդրի հետ և կպահանջվի օգտագործել հումանիտար գիտության մեթոդները և մոտեցումները բարդ իրավիճակների լուծման համար: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն, տարբեր հումանիտար գիտությունների մեթոդները և մոտեցումները պայմանական կառավարման խնդիրները լուծելու համար:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 10 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՆԵՋԵՐԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԽՄԲՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

**Մոդուլի դասիչը՝** ՄԵՆ-4-08-002

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ և կարողություններ թիմի մեջ հաջողակ աշխատելու համար: Այս մոդուլի շրջանակում ուսանողը կտիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային; կիմանա թե ինչպես նա պետք է դրսևորի իր վարքագիծը թիմում առաջնորդի կարգավիճակին արժանանալու համար: Քանի որ հաղորդակցությունը ղեկավարի մասնագիտական գործունեության մեջ հանդիսանում է որպես անհրաժեշտ միջոց թիմում ամրապնդվելու և հասարակության մեջ հաջողության հասնելու համար, ապա դրան դարձվում է հատուկ ուշադրություն: Ուստի, այս մոդուլը նախատեսված է նրանց համար, ովքեր կարիք ունեն զարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Մոդուլը կարելի է սովորել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է նաև ընդհանուր կրթության և անձի զարգացման համար կարևոր տարրեր: Սա նշանակում է, որ դասավանդողները պիտի խրախուսեն տարբեր մոտեցումներ բացահայտելու հնարավորությունները, ինչպես օրինակ՝ դերային խաղեր, տեսանյութեր, մամուլի ուսումնասիրություն և այլն:

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա իրեն ճիշտ դրսևորի թիմում և հասարակության մեջ, կզարգացնի հաղորդակցության կարևոր ունակություններ, ձեռք կբերի ինքնավստահություն, որպեսզի կարողանա խմբում լինել իր բնագավառի մեջ առաջնորդ, արդյունավետ և ակտիվ կերպով հաղորդակցվել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կյանքում:

**Մոդուլի տևողությունը՝ 108 ժամ**

Տեսական ուսուցում 46 ժամ

Գործնական պարապմունք 62 ժամ

**Մուտքային պահանջները՝ Չկան**

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային.
2. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ենթակա աշխատակիցների հետ.
3. իմանա հաղորդակցության հիմունքները, հոգեբանությունը և ոճերը,
4. կարողանա հասկանալ անձի հոգեկան վիճակը, վարքը և բնավորության գծերը,
5. բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարի մասնագիտական թեմաների և տեքստերի մասին,
6. նախաձեռնի, պահպանի, եզրափակի գործնական երկխոսություններ և քննարկումներ,
7. մեկնաբանի սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ,
8. վիճելի հարցերում կարողանա գտնել և ընդունել օպտիմալ լուծումներ՝ ելնելով ստեղծված պրոբլեմային իրավիճակից:

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և այդտեղ կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.

բ. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ,

գ. իմանում է վարվելաձևը տարբեր իրավիճակներում,

դ. ճիշտ և կուլտուրական է վերաբերվում մարդկանց հետ,

ե. ճիշտ է կիրառում բառեր և հաղորդակցման կառուցվածքներ, որոնք հարկավոր է օգտագործել պարզ և գործնական խոսքում,

զ. ճիշտ և հասկանալի է շարադրում իր մտքերը, բացատրում առաջադրանքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողից կպահանջվի ներկայացնել պայմանական կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները: Ուսանողին կառաջադրվի պրոբլեմային աշխատանքային իրավիճակ և կպահանջվի առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր և լուսանկարներ, ուսումնական գրականություն, շփման «մոդելների» քարտեր, ձայնագրություններ, սեմինարներ: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առնտրային կազմակերպություններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 8 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 8 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ենթակա աշխատակիցների հետ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է բացատրում աշխատանքի հաճախման և ճշտապահության կարևորությունը.

բ. ճիշտ է ներկայացնում ենթակա աշխատակիցների հետ հարաբերվելու ձևերը, իր և ենթակա աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները.

գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կներկայացվի ենթակա աշխատակիցների հետ հարաբերակցվելու որևէ իրավիճակ և կպահանջվի ներկայացնել պահանջվող վարքագիծը: Կտրվեն հարցեր իր և ենթակա աշխատակիցների իրավունքների ու պարտականությունների մասին: Ուսանողից կպահանջվի ներկայացնել նորմատիվային ակտերով, ինչպես նաև որևէ կազմակերպության ներքին կանոնակարգով և աշխատանքային ռեժիմով սահմանված մասնագիտական գործունեության պարտականությունները: Կտրվեն ուշիմության,

ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն, տեսաֆիլմեր, ձայնագրություններ, սեմինարներ: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առևտրային կազմակերպություններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 4 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 6 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ հաղորդակցության հիմունքները, հոգեբանությունը և ոճերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է բացատրում հաղորդակցության ընդհանուր հասկացությունը.

բ. ճիշտ է ներկայացնում հաղորդակցության ընթացքը, վերլուծում հետադարձ կապի տվյալները.

գ. ճիշտ է ներկայացնում հաղորդակցության ձևերը, ցանցերը և ոճերը.

դ. ճիշտ, կուլտուրական և գրագետ է հաղորդակցվում մարդկանց հետ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր հաղորդակցության հետ կապված ընդհանուր դրույթների վերաբերյալ, ինչպես նաև հոգեբանական հարցեր՝ աշխատանքային և միջանձնային հարաբերությունների կարողությունները բացահայտմանն նպատակով: Կպահանջվի առաջարկել լուծումների տարբերակներ: Ուսանողին կներկայացվի որևէ գրավոր հաղորդակցություն և կպահանջվի վերլուծել հաղորդակցության հետադարձ կապի տվյալները: Կհանձնարարվի կազմել գործնական և անձնական նամակներ՝ գրավոր ձևով հաղորդակցվելու և մտքեր շարադրելու կարողությունները բացահայտմանն նպատակով: Կառաջադրվեն աշխատանքային իրավիճակների օրինակներ՝ սթրեսի կանխարգելման և դիմակայման գիտելիքները ստուգելու նպատակով: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր, ուսումնական գրականություն, շփման «մոդելների» քարտեր, ձայնագրություններ, մամուլի ուսումնասիրություն, սեմինարներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 6 ժամ |

Գործնական պարապմունք՝ 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանալ հասկանալ անձի հոգեկան վիճակը, վարքը և բնավորության գծերը**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ ՆԵՐ</u>

ա. ճիշտ է ներկայացնում մարդկանց տիպերը նրանց բնավորության տեսանկյունից և կարողանում է ճանաչել մարդկանց տիպերը,

բ. ճիշտ է գնահատում անձի իդեալները և նորմերը,

գ. ճիշտ է հասկանում մարդու հոգեկան վիճակը ու վարքագիծը, և կառուցում ճիշտ հարաբերություններ նրա հետ,

դ. ճիշտ է տիրապետում իրեն սթրեսային և գրգռիչ հանգամանքներում,

ե. ճիշտ է հասկանում զրուցակցի շահերը, ցույց տալիս իր սեփական շահը և գտնում փոխշահավետ լուծումներ:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր մարդկանց տիպերի վերաբերյալ իրենց բնավորության տեսանկյունից, կբերվեն օրինակներ և կպահանջվի որոշել թե որ տիպին է պատկանում այս կամ այն մարդը: Կառաջադրվի դասակարգել անձի իդեալները և նորմերը, տալ իր գնահատականը այս կամ այն բնութագրիչներին: Կառաջադրվի ներկայացնել օրինակներ պայմանական մարդու հոգեկան վիճակի և վարքագծի վերաբերյալ և ցուցադրել իր վերաբերմունքը դրանց հանդեպ: Ուսանողին կներկայացվի սթրեսային և գրգռիչ աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն, նկարներ, տեսաֆիլմեր, սեմինարներ: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել մասնագիտական թեմաների և տեքստերի մասին**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ ՆԵՐ</u>

ա. ճիշտ է օգտագործում բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը,

բ. ճիշտ, հակիրճ և պարզ պարունակում է հաղորդման մեջ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,

գ. ճիշտ է կիրառում մասնագիտական տերմինները բանավոր և գրավոր խոսքի մեջ,

դ. նպատակային է կատարում տեղեկատվության առանձնացում/խմբավորում,

ե. ճիշտ է ընտրում հաղորդակցման միջոցները,

զ. ճիշտ է իրականացնում հաղորդումը՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ կոնֆլիկտալոգիայի հիմնահարցերի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր, հաճախորդի մոտ առաջացող հնարավոր խնդիրները պարունակող հատուկ քարտեր, շփման «մոդելների» քարտեր, ձայնագրություններ, սեմինարներ, մրցակցություններ ուսանողների միջև, “ուղեղային գրոհի” մեթոդ: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Կազմակերպվում են իրավիճակային, գործնական և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Օգտագործվելու են ցուցադրական տարբեր նյութեր և ուսումնամեթոդական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է պատկերացնում աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները.

բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները,

գ. ճիշտ է բացատրում աշխատանքի հաճախման և ճշտապահության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքում հաջողությանը հասնելու մասին: Ուսանողին կներկայացվի աշխատակիցների հետ հարաբերակցվելու որևէ իրավիճակ և կպահանջվի ներկայացնել պահաջվող վարքագիծը: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային, գործնական և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր, սեմինարներ, մրցակցություններ ուսանողների միջև, "ուղեղային գրոհի" մեթոդ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 6 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 8 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Պատշաճ հարաբերվել ղեկավարի և աշխատողների հետ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է պատկերացնում ղեկավար – մենեջեր և մենեջեր -աշխատող հարաբերվելու ձևերը.

բ. ճիշտ է ձևակերպում մենեջերի, ղեկավարի և աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն հարցեր ղեկավար-մենեջեր-աշխատող փոխկապակցվածության վերաբերյալ, կպահանջվի ներկայացնել օրինակներ: Ուսանողն կառաջարկվի ներկայացնել մենեջերի, ղեկավարի և աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները: Ուսանողին կներկայացվի ղեկավարի հետ հարաբերակցվելու որևէ իրավիճակ և կպահանջվի ներկայացնել պահաջվող վարքագիծը: Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային, գործնական և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Կիրառվելու են դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր, շփման «մոդելների» քարտեր, ձայնագրություններ, սեմինարներ: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առնտրային կազմակերպություններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական պարապմունք` 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6.Տիրապետել ինքնակառավարման հիմունքներին և կարողանալ կիռարել դրանք գործնականում:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ</u>

ա.ճիշտ է պատկերացնում "ինքնակառավարում" հասկացողությունը, ինքնակառավարման համակարգի ուղղությունները.

բ.ճիշտ է կարողանում օգտագործել իր ժամանակային ռեսուրսները նպատակներին հասնելու համար,

գ. ճիշտ է կիրառում անձնական աշխատանքի տեխնիկայի հմտությունները,

դ. ճիշտ է կիրառում ղեկավարի աշխատանքի նորմավորման մեթոդները,

ե. ճիշտ է պլանավորում և վերահսկում ժամանակային ռեսուրսների օգտագործումը,

զ. ճիշտ է վերլուծում իր աշխատանքային ժամերի ծախսերը, կարողանում կրճատել ժամանակի կորուստները:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`</u>

Ուսանողին կտրվեն հարցեր ինքնակառավարման հիմունքների, ինքնակառավարման համակարգի ուղղությունների վերաբերյալ: Ուսանողին կներկայացվի իրավիճակ (օրինակ) և կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ` ժամանակի կառավարման ունակությունը բացահայտմանն նպատակով: Ուսանողին կառաջարկվի ներկայացնել օրինակ` անձնական աշխատանքի տեխնիկայի հմտությունները ցուցադրելու նպատակով: Սովորողին կներկայացվի որևէ իրավիճակ` ժամանակային ռեսուրսների պլանավորման, վերահսկման և վերլուծման կարողություններն և հմտություններն բացահայտելու համար: Այդուսակի միջոցով կհանձնարարվի ներկայացնել առևտրային կազմակերպության ղեկավարի աշխատանքային ժամերի ծախսերի կառուցվածքը: Կառաջադրվի ցուցադրել ղեկավարի աշխատանքի նորմավորման մեթոդների ճիշտ և հմուտ օգտագործումը` աշխատանքային ժամանակի օպտիմալ պլանավորման համար: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային, գործնական և դերային խաղեր` առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Կիրառվելու են դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր, շփման «մոդելների» քարտեր, ձայնագրություններ, սեմինարներ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական պարապմունք` 12 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

**Մոդուլի դասիչը`** ՄԵՆ-4-08-007

**Մոդուլի նպատակը`**

Ուսանողին տալ գիտելիքներ ապրանքների և ծառայությունների տեսակների, դասակարգման չափանիշների, ինչպես նաև նրանց առանձնահատկությունների վերաբերյալ: Սովորողը կուսումնասիրի ապրանքների հատկությունները և սպառողական նշանակության մասին տեղեկությունը, ինչպես նաև ստանդարտացման և սերտեֆիկացման հիմնական կատեգորիաները ըստ միջազգային չափանիշների; կկարողանա որոշել ապրանքի որակը` հիմնվելով որակին ներկայացվող պահանջներին և նորմերին:

Ավարտելով այս մոդուլը` ուսանողը կյուրացնի արտահանման և ներմուծման մեթոդները, միջոցները և առանձնահատկությունները; կկարողանա հաշվի առնել և կիրառել ազգային առանձնահատկությունները, ճաշակները և ավանդույթները արտահանման և ներմուծման ժամանակ:

**Մոդուլի տևողությունը`** **54 ժամ**

Տեսական ուսուցում 34 ժամ
Գործնական պարապմունք 20 ժամ

**Մուտքային պահանջները`** **Չկան**

**Ուսումնառության արդյունքները`**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **կարողանա դասակարգել ապրանքները ըստ տարբեր չափանիշների,**
2. **սահմանի ծառայությունը որպես ապրանքի հատուկ տեսակ,**
3. **կարողանա որոշել ապրանքի որակը,**
4. **իմանա ապրանքների արտահանման և ներմուծման հիմունքները,**
5. **հաշվի առնի ազգային առանձնահատկությունները և ավանդույթները արտահանման և ներմուծման ժամանակ:**

**Գնահատման կարգը`**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանալ դասակարգել ապրանքները ըստ տարբեր չափանիշների**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

ա. ճիշտ է դասակարգում ապրանքները ըստ ծառայության ժամկետի,

բ. ճիշտ է դասակարգում ապրանքները ըստ նշանակության նպատակի,

գ. ճիշտ է դասակարգում ապրանքները ըստ օգտագործման տեղի,

դ. ճիշտ է դասակարգում ապրանքները ըստ ամորտիզացիայի ժամկետի,

ե. ճիշտ է դասակարգում ապրանքները ըստ չափսի:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Ուսանողին կտրվեն հարցեր ապրանքների դասակարգման մասին ըստ տարբեր չափանիշների: Կպահանջվի ներկայացնել դրանց առանձնահատկությունները և բերել օրինակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնամեթոդական գրականություն, նկարներ, տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Սահմանել ծառայությունը որպես ապրանքի հատուկ տեսակ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում ծառայության հասկացությունը,

բ. ճիշտ է դասակարգում,

գ. ճիշտ է ներկայացնում ծառայության որպես ապրանքի հատուկ տեսակի հատկությունների հատկանիշները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր ծառայության որպես ապրանքի հատուկ տեսակի վերաբերյալ: Կպահանջվի դասակարգել ծառայությունների տեսակները և բերել օրինակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնամեթոդական գրականություն, տեսաֆիլմեր, այլ դիդակտիկ նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանալ որոշել ապրանքի որակը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է իմանում ապրանքի արտադրման տեխնոլոգիան ընդհանրապես,

բ. ճիշտ է իմանում ապրանքների հատկությունները,

գ. ճիշտ է դասակարգում ապրանքների տեսակները և նրանց սպառողական նշանակությունը,

դ. ճիշտ է պատկերացնում ստանդարտացման և սերտեֆիկացման հիմնական կատեգորիաները ըստ միջազգային չափանիշների,

ե. ճիշտ է ներկայացնում ապրանքների որակին ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր ապրանքների որակի վերաբերյալ: Կպահանջվի դասակարգել ապրանքների տեսակները և հայտաբերել նրանց սպառողական նշանակությունը: Ուսանողին կներկայացվի որևէ ապրանքի օրինակ, կպահանջվի թվարկել դրա որակին ներկայացվող պահանջները և նորմերը: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն, միջազգային մեթոդանորմատիվային նյութեր:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 6 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 4 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ ապրանքների արտահանման և ներմուծման հիմունքները**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է սահմանում արտահանման և ներմուծման հասկացությունները,

բ. ճիշտ է ներկայացնում արտահանման և ներմուծման մեթոդները և միջոցները,

գ. ճիշտ է ներկայացնում արտահանման և ներմուծման այս կամ այն տեղափոխման միջոցի առանձնահատկությունները,

դ. ճիշտ է հաշվի առնում բեռնափոխադրման այս կամ այն միջոցների տեղափոխման ծախսերը:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր արտահանման և ներմուծման մեթոդների և միջոցների, նրանց առանձնահատկությունների վերաբերյալ: Ուսանողին կներկայացվի որևէ ապրանքի արտահանման և ներմուծման օրինակ, կպահանջվի վերլուծել այն և ընդունել օպտիմալ լուծումներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն, միջազգային մեթոդանորմատիվային նյութեր:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 8 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 4 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Հաշվի առնել ազգային առանձնահատկությունները և ավանդույթները արտահանման և ներմուծման ժամանակ**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է իմանում հիմնական և ընդհանուր ավանդույթները տարբեր երկրների, մշակույթների,

բ. ճիշտ է իմանում տարբեր ազգությունների ճաշակները,

գ. ճիշտ է իմանում այս կամ այն երկրի սոցիալական, մշակույթային, քաղաքական և տնտեսական իրադրության առանձնահատկությունները արևտրային գործունեության պլանավորման ժամանակ,

դ. ճիշտ է կարողանում համակառույց օգտագործել գիտելիքներ վերաբերվող այս կամ այն երկրի առանձնահատկություններին և ավանդույթներին՝ գործունեության անխափ և շահավետ պլանավորման համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր տարբեր երկրների առանձնահատկությունների, ճաշակների և ավանդույթների վերաբերյալ՝ օգտագործվող ապրանքների և ծառայությունների տեսանկյունից, կպահանջվի բերել օրինակներ: Ուսանողին կներկայացվի որևէ իրավիճակ, կպահանջվի դրսևորել իր վերաբերմունքը դրա նկատմամբ և ընդունել ճիշտ և օպտիմալ լուծումներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն, միջազգային սոցիալ-մշակութային նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇՈՒԿԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

**Մոդուլի դասիչը՝** **ՄԵՆ-4-08-008**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ շուկայագիտության հիմունքների վերաբերյալ: Մոդուլում կուսումնասիրվեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են. մարքետինգի նպատակը, առարկան, տերմինները և այլն; մարքետինգի միջավայրը, այսինքն կազմակերպության արտաքին ու ներքին, ուղղակի և անուղղակի ազդեցությունները; ապրանքագիտությունը; գովազդումը: Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա անցկացնել շուկայագիտական հետազոտությունները, ղեկավարել տարածման ալիքները; կիրառել գնագոյացման մեթոդները և ռազմավարությունները, մարքետինգի հնարները, այն է՝ սեգմենտավորում ու նպատակային շուկաների ընտրություն, դիրքավորում, առաջխաղացում:

**Մոդուլի տևողությունը՝** **108 ժամ**

Տեսական ուսուցում 64 ժամ

Գործնական պարապմունք 44 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «ՄԵՆ-4-08-007-Ապրանքագիտության հիմունքներ» մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա շուկայագիտության հիմունքները,

2. իմանա կազմակերպության արտաքին ու ներքին, ուղղակի և անուղղակի ազդեցությունները և դրա հիման վրա կարողանա գնահատել կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին միջավայրի վտանգները,

3. կարողանա մշակել ու սահմանել զեղչերի համակարգ և մատակարարման պայմաններ, լրացուցիչ սոցիալական միջոցառումներ, ինչպես նաև անել վաճառքի կանխատեսումներ,

4. կարողանա անցկացնել շուկայագիտական հետազոտությունները, վերլուծել տնտեսագիտական և շուկայագիտական տեղեկատվությունը,

5. կիրառի գնագոյացման մեթոդները և ռազմավարությունները,

6. կիրառի մարքետինգի հնարները,

7. կարողանա ընդունել որոշումներ ապրանքների ու ծառայությունների տեսակների վերաբերյալ, կիրառել վաճառքի մեթոդներ, խթանել վաճառահանումը գովազդի և այլ տարածման ալիքների միջոցով, նախընտրել այս կամ այն մարքետինգի ռազմավարական կողմնորոշում:

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ շուկայագիտության հիմունքները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ներկայացնում մարքետինգի նպատակները, առարկան, օբյեկտը, սուբյեկտը,

բ. ճիշտ է օգտագործում շուկայագիտական տերմինները,

գ. ճիշտ է պատկերացնում և հիմնավորում մարքետինգի տեղը և դերը ձեռնարկության համար ու նրա առևտրային գործընթացում:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր մարքետինգի նպատակների, առարկայի, օբյեկտի, սուբյեկտի վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի բերել օրինակներ (իրավիճակ կամ խնդիր) առևտրային ձեռնարկություններում մարքետինգի բաժինների դերը, նպատակները, պարտականությունները, տեղը ցուցադրելու համար: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունն րի և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու է ուսումնական գրականություն:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 8 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 4 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.Իմանալ կազմակերպության արտաքին ու ներքին, ուղղակի և անուղղակի ազդեցությունները և դրա հիման վրա կարողանալ գնահատել կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին միջավայրի վտանգները**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության միկրո- և մակրոմիջավայրի տարրերը ըստ առևտրային գործունեության կոնկրետ ոլորտի,

բ. ճիշտ է առանձնացնում փաստերով հիմնավորված գործոններ նրա ներքին և արտաքին միջավայրի վերաբերյալ, ուղղակի և անուղղակի ազդեցությունը կազմակերպության վրա,

գ. ճիշտ է պատկերացնում միջավայրի գործոնների ազդեցությունը որպես հնարավորություններ և վտանգներ կազմակերպության համար,

դ. ճիշտ է հիմնավորում փաստերով կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին միջավայրի վտանգները,

ե. ճիշտ է գնահատում միջավայրի գործոնների և կազմակերպության հատկանիշների ազդեցությունը մարքետինգային ու առևտրային գործընթացի վրա:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր մարքետինգի միջավայրի, ուղղակի և անուղղակի ազդեցության վերաբերյալ: Ուսանողին կներկայացվի առևտրային գործունեության կոնկրետ ոլորտի կամ որևէ շուկայի վերաբերյալ իրավիճակ/խնդիր և կպահանջվի նշել դրա ներքին և արտաքին, միկրո- և մակրոմիջավայրը: Սովորողին կտրամադրվեն կազմակերպության (իրական կամ մտածված) տվյալներ և կհանձնարարվի գնահատել կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ կիրառելով SWOT-վերլուծությունը: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն, վերլուծական մեթոդներ և միջոցներ, այդ թվում՝ SWOT-վերլուծությունը:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 10 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 6 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.Կարողանալ մշակել ու սահմանել զեղչերի համակարգ և մատակարարման պայմաններ, լրացուցիչ սոցիալական միջոցառումներ, ինչպես նաև անել վաճառքի կանխատեսումներ**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ներկայացնում զեղչերի համակարգի նշանակությունը և ձևերը,

բ. ճիշտ է հասկանում, ներկայացնում և մշակում մատակարարման պայմանները,

գ. ճիշտ է զգում հարմար ժամանակը և իրականացնում լրացուցիչ սոցիալական միջոցառումներ,

դ. ճիշտ է անում վաճառքի կանխատեսումներ ելնելով վաճառքների խթանման մշակված համակարգից:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր զեղչերի տեսակների, նշանակության, վաճառքի խթանման համար լրացուցիչ սոցիալական միջոցառումների վերաբերյալ: Ուսանողին կներկայացվի իրավիճակ/խնդիր և կպահանջվի մշակել մատակարարման պայմանները: Սովորողին կտրամադրվեն կազմակերպության (իրական կամ մտածված) տվյալներ և կհանձնարարվի մշակել զեղչերի համակարգը, լրացուցիչ սոցիալական միջոցառումները, ինչպես նաև կատարել վաճառքի կանխատեսումներ ելնելով վաճառքների խթանման մշակված համակարգից: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունն ե րի և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն, ձևաթղթեր, ձևաչափեր, հաճախորդի մոտ առաջացող հնարավոր խնդիրները պարունակող հատուկ քարտեր, մրցակցություններ ուսանողների միջև, “ուղեղային գրոհի” մեթոդ: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առևտրային կազմակերպություններում: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 10 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 6 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.Կարողանալ անցկացնել շուկայագիտական հետազոտությունները, վերլուծել տնտեսագիտական և շուկայագիտական տեղեկատվությունը**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա.ճիշտ է մշակում տրամաբանական և կազմակերպության նպատակներին համառժեք շուկայական հետազոտության պլան՝ անհրաժեշտ ֆինանսական հիմնավորմամբ,

բ. ճիշտ է հավաքագրում ներքին և արտաքին տեղեկատվությունները,

գ. ճիշտ է վերլուծում տնտեսագիտական և շուկայագիտական տեղեկատվությունը և ներկայացնում ամփոփ տեսքով (բանավոր և գրավոր),

դ. ճիշտ է ընդունում որոշումներ ելնելով կատարված արդյունքներից:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր շուկայագիտական հետազոտությունների իմաստի, նշանակության, անհրաժեշտության, նպատակների ու խնդիրների, տեսակների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի աղյուսակի միջոցով ներկայացնել արդյունաբերական և սպառողական շուկաների շուկայագիտական հետազոտությունների տարբերությունները: Կներկայացվի հետազոտության խնդիր/առաջադրանք որևէ

շուկայի կամ մարքեթինգային հիմնախնդրի վերաբերյալ և կհանձնարարվի մշակել շուկայագիտական հետազոտությունների կիրառման ծրագիր: Կներկայացվի խնդիր/իրավիճակ և կառաջարկվի հավաքագրել տեղեկատվություններ՝ օգտագործելով ինտերնետ կայքեր, մարքեթինգային տեղեկատվության այլ աղբյուրներ: Սովորողը պետք է վերլուծի հավաքագրված տեղեկատվությունները և կատարի բանավոր և գրավոր ներկայացումներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր: Նաև հնարավոր է հանձնարարել կուրսային կամ այլ գրավոր աշխատանքներ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն, ձևաթղթեր, ձևաչափեր, հաճախորդի մոտ առաջացող հնարավոր խնդիրները պարունակող հատուկ քարտեր, “ուղեղային գրոհի” մեթոդ: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առևտրային կազմակերպություններում:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Տեսական ուսուցում 10 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կիրառել գնագոյացման մեթոդները և ռազմավարությունները**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է գնահատում գնագոյացման ներքին և արտաքին գործոնները.

բ. ճիշտ է կիրառում գնագոյացման հիմնական մեթոդները.

գ. ճիշտ է գնահատում ապրանքը կամ ծառայությունը և որոշում գինը հիմնվելով գնագոյացման ռազմավարությունների վրա:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր գնագոյացման մեթոդների և ռազմավարությունների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի գնահատել որևէ ապրանք կամ ծառայություն՝ հաշվի առնելով ներքին ու արտաքին գործոնները և կիրառելով գնագոյացման մեթոդները ու ռազմավարությունները: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնամեթոդական գրականություն, ձևաթղթեր, ձևաչափեր: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կիրառել մարքետինգի հնարները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա.ճիշտ է անցկացնում սեգմենտավորումը, գնահատում շուկայի առանձին սեգմենտը և դրա հիման վրա կայացնում նպատակային շուկաների ընտրության որոշումը (սեգմենտավորումը, թիրախի ընտրությունը և դիրքավորումը համապատասխանում են կազմակերպության նպատակներին, հատկանիշներին և շուկայի իրողություններին).

բ.ճիշտ է իրականացնում դիրքավորման ռազմավարությունների ընտրությունը և կիրառումը.

գ.ճիշտ է կազմակերպում ապրանքների կամ ծառայությունների վաճառահանումը օգտագործելով մարքետինգի տարբեր միջոցներ ապրանքների առաջխաղացման համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր սեգմենտավորման, նպատակային շուկաների ընտրության, դիրքավորման և առաջխաղացման վերաբերյալ: Ուսանողին կներկայացվի առևտրային գործունեության կոնկրետ ոլորտի կամ որևէ շուկայի վերաբերյալ իրավիճակ/խնդիր և կպահանջվի անցկացնել սեգմենտավորում և դրա հիման վրա կայացնել նպատակային շուկաների ընտրության որոշումը: Սովորողին կտրամադրվեն կազմակերպության (իրական կամ մտածված) տվյալներ և կհանձնարարվի առաջարկել նպատակահարմար դիրքավորման ռազմավարությունը, ինչպես նաև կազմակերպել ապրանքի կամ ծառայության վաճառահանումը՝ օգտագործելով մարքետինգի տարբեր միջոցներ ապրանքների առաջխաղացման համար: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն, ձևաթղթեր, ձևաչափեր, հաճախորդի մոտ առաջացող հնարավոր խնդիրները պարունակող հատուկ քարտեր: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առևտրային կազմակերպություններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 10 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 8 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 7.Կարողանալ ընդունել որոշումներ ապրանքների ու ծառայությունների տեսակների վերաբերյալ, կիրառել վաճառքի մեթոդներ, խթանել վաճառահանումը գովազդի և այլ տարածման ալիքների միջոցով, նախընտրել այս կամ այն մարքետինգի ռազմավարական կողմնորոշում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա.ճիշտ է ընդունում որոշումներ ապրանքների ու ծառայությունների տեսակների, փաթեթավորման և այլնի վերաբերյալ (հաշվի առնելով կազմակերպության նպատակները, հնարավորությունները, պահանջարկը և մրցակիցների դիրքերը),

բ. ճիշտ է տարբերակում ու կիրառում վաճառքի մեթոդները,

գ.ճիշտ է ընդունում հիմնական որոշումներ և կազմակերպում գովազդի ստեղծումը,

դ.ճիշտ է դնում նպատակները և ընտրում միջոցներ վաճառահանումների խթանումի համար,

ե. ճիշտ է նախընտրում այս կամ այն մարքետինգի ռազմավարական կողմնորոշումը:

**<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>**

Ուսանողին կներկայացվի իրավիճակ/խնդիր և կպահանջվի կայացնել որոշումներ վաճառքի մեթոդների, գովազդի ստեղծման և այլ վաճառահանումների խթանման միջոցների ընտրության համար: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր: Ուսանողից կպահանջվի ցուցադրել համապատասխան համակարգչային ծրագրերի կիրառմամբ վաճառահանումների խթանման միջոցների կիրառման իր կարողությունը: Կհանձնարարվի առաջարկել վաճառքների ծավալի և շուկայական մասի ընդլայնման մեթոդները՝ կիրառելով մարքետինգի ռազմավարական կողմնորոշումները:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

**<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>**

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, մրցակցություններ ուսանողների միջև, “ուղեղային գրոհի” մեթոդ, ուսումնամեթոդական գրականություն, առևտրային համակարգչային ծրագրեր: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առևտրային կազմակերպություններում: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

**<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>**

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 8 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 6 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ»

**Մոդուլի դասիչը՝** **ՄԵՆ-4-08-009**

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ** 54 ժամ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 12 ժամ |
| Գործնական աշխատանք | 42 ժամ |

**ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ** Այս մոդուլը մշակվել է ուսանողներին հասարակական զանգվածային երևույթների վերաբերյալ տեղեկությունների մշակման վիճակագրական մեթոդների մասին գիտելիքներ և այդ մեթոդները կիրառելու անհրաժեշտ հմտություններ զարգացնելու նպատակով:

Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր իրենց մասնագիտական գործունեության առումով կարիք ունեն զանգվածային երևույթների վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկությունների ուսումնասիրման հիման վրա անհրաժեշտ գործնական հետևություններ անել երևույթների վիճակի, այն պայմանավորող գործոնների, սպասվող զարգացումների վերաբերյալ: Այս կարողությունները կարևոր են երևույթների զարգացման ընդհանուր օրինաչափությունները գնահատելու, զարգացման ծրագրեր կազմելու և դրանք հիմնավորելու համար:

**ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ** Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է**

1. Զանգվածային երևույթների վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները նախապատրաստի հետագա ուսումնասիրման համար:
2. Հաշվի միջին մեծություններ:
3. Կատարի վարիացիոն շարքի ցուցանիշների հաշվարկ և վերլուծություն:
4. Հաշվի ինդեքսներ:
5. Հաշվի դինամիկ շարքի ցուցանիշները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ** Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱՐ**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա/ վիճակագրական տեղեկության սահմանումը ճիշտ է,
բ/ վիճակագրական տեղեկություններին ներկայացվող պահանջների սահմանումը ճիշտ է,
գ/ վիճակագրական տեղեկությունների ստացման աղբյուրները ներկայացնում է,
դ/ վիճակագրական տեղեկությունների ստացման ձևերի առանձնահատկությունները ներկայացնում է,
ե/ վիճակագրական տեղեկությունների չափման միավորները ճիշտ է ներկայացնում,
զ/ սահմանում է վիճակագրական տեղեկությունների խմբավորման նպատակը,
է/ կատարում է վիճակագրական տեղեկությունների խմբավորում,
ը/ վիճակագրական տեղեկությունները ներկայացնի աղյուսակային տեսքով:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություններ կատարելու հիման վրա: Ուսանողին հարցեր են առաջադրվելու վիճակագրական տեղեկությունների բնույթի և առանձնահատկությունների, դրանց ներկայացվող պահանջների, ստացման աղբյուրների, կիրառվող չափման միավորների վերաբերյալ:

Գործնական հանձնարարությունների միջոցով ուսանողը պետք է կատարի տեղեկությունների խմբավորում, արդյունքները ձևակերպի աղյուսակների տեսքով:

Ստորև ներկայացվում է

ա/վիճակագրական տեղեկություններին ներկայացվող հիմնական պահանջները

- լրիվ,
- հավաստի, ճիշտ,
- համեմատելի,
- ժամանակին

բ/ վիճակագրական տեղեկությունների ստացման աղբյուրները.

- հաշվետվություններ,
- հատուկ կազմակերպված դիտարկում

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլատրվում է ոչ էական թերություններ, բացթողումներ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, վիճակագրական փաստաթղթերի ձևեր,

աղյուսակների ձևեր, զանգվածային երևույթների վերաբերյալ նախնական տվյալներ: Նպատակահարմար է ուսուցման ժամանակ օգտագործել նաև համակարգչային ծրագրերը՝ էլեկտրոնային աղյուսակներ կիրառելու նպատակով, պրոյեկցիոն սարքեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2 ՀԱՇՎԵԼ ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա/ միջին մեծությունների նշանակությունը և կիրառումը ճիշտ է ներկայացնում,

բ/ ճիշտ է հաշվում միջին թվաբանականներ,

գ/ ճիշտ է հաշվում հարմոնիկ միջիններ,

դ/ ճիշտ է հաշվում միջին քառակուսայիններ,

ե/ ճիշտ է հաշվում միջին երկրաչափականներ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական հանձնարարություններ կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ըստ որոշակի տվյալների հաշվարկել միջին մեծություններ: Նա պետք է կարողանա տեղեկության բնույթին համապատասխան ընտրել միջին մեծությունը և հաշվել այն տվյալ խմբի համար: Առաջադրանքը պետք է պարունակի առնվազն 3 միջին մեծության հաշվարկ:

Ստորև ներկայացվում է.

ա/ յուրաքանչյուր միջին մեծության տեսակները.

- պարզ միջին մեծություն,
- կշռված միջին մեծություն:

բ/ միջինացվող ցուցանիշների տեսակները.

- բացարձակ մեծություններ,
- հարաբերական մեծություններ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը ըստ էության կատարվում է ճիշտ, թույլատրվում են որոշակի, ոչ էական տեխնիկական թերություններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տեխնիկական միջոցներ, հաշվարկների համար նախապատրաստված տվյալներ՝ հնարավորինս լայն ընդգրկումով, մեթոդական հանձնարարականների թերթիկներ: Առավել արդյունավետ կլինի ուսուցման ժամանակ օգտագործել համակարգչային համապատասխան ծրագրեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական պարապմունք 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3 ԿԱՏԱՐԵԼ ՎԱՐԻԱՑԻՈՆ ՇԱՐՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա/ համախմբում վարիացիայի առկայության պատճառները ներկայացնում է,

բ/ համախմբում վարիացիայի գնահատման անհրաժեշտությունը բացատրում է,

գ/ ձևավորում է վարիացիոն շարք՝ ըստ նախնական տվյալների,

դ/ հաշվում է վարիացիոն շարքի ցուցանիշները,

ե/ հաշվում է վարիացիոն շարքի մոդան և մեդիանան,

զ/ գնահատում է վարիացիան տվյալ համախմբում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով պարզվելու է, թե ուսանողը ինչ պատկերացում ունի վարիացիայի՝ որպես զանգվածային երևույթներում օբյեկտիվորեն հանդիպող դրսևորման, դրա պատճառների և գնահատման կարևորության մասին: Գործնական առաջադրանքով ուսանողին հանձնարարվելու է հաշվել անհրաժեշտ ցուցանիշներ, գնահատել ստացված արդյունքները:

Ստորև ներկայացվում է

ա/ վարիացիոն շարքի տեսակները.

- դիսկրետ,
- միջակայքային

բ/ վարիացիայի ընդհանրական ցուցանիշները

- վարիացիայի թափ,
- միջին գծային շեղում,
- դիսպերսիա,
- միջին քառակուսային շեղում,
- վարիացիայի գործակից

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանվում, իսկ հաշվարկները կատարվում են համապատասխան մեթոդիկայով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ուսումնական և մեթոդական նյութեր, տեխնիկական միջոցներ, գործնական աշխատանքների համար պատրաստված նախնական տվյալներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 2 ժամ |
| Գործնական աշխատանք | 10 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 4 ՀԱՇՎԵԼ ԻՆԴԵՔՍՆԵՐ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա/ ինդեքսների յուրահատկությունը ճիշտ է բնութագրում,

բ/ հաշվում է անհատական ինդեքսներ,

գ/ հաշվում է ընդհանուր ինդեքսներ՝ ըստ ցուցանիշի բնույթի,

դ/ հաշվում է ցուցանիշի փոփոխության բացարձակ չափերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ըստ տրված ցուցանիշների հաշվել ոչ պակաս 4 ընդհանուր ինդեքսներ քանակական և որակական ցուցանիշների համար:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կարող է համարվել, եթե ինդեքսը ճիշտ է հաշվարկվում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հաշվարկների համար անհրաժեշտ ելակետային տվյալներ, մեթոդական հանձնարարականներ, համապատասխան տեխնիկական միջոցներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 2 ժամ |
| Գործնական աշխատանք | 10 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 5 ՀԱՇՎԵԼ ԴԻՆԱՄԻԿ ՇԱՐՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա/ ըստ տվյալների ձևավորի դինամիկ շարք,

բ/ հաշվի դինամիկ շարքի ցուցանիշները,

գ/ հաշվի դինամիկ շարքի միջին ցուցանիշներ,

դ/ բացահայտի զարգացման տենդենցները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Ուսանողին կառաջադրվի դինամիկ շարքի օրինակներ, ըստ որոնց նա պետք է կատարի համապատասխան հաշվարկներ, որոշի ցուցանիշների մեծությունը, կատարի եզրահանգումներ:

Ստորև ներկայացվում է

ա/ դինամիկ շարքի ցուցանիշները

- բացարձակ հավելաճ,
- աճի տեմպ,
- հավելաճի տեմպ,
- 1 տոկոս հավելաճի բացարձակ մեծություն

բ/ զարգացման տենդենցի բացահայտման մեթոդները

- դինամիկ շարքի խոշորացում,
- դինամիկ շարքի հարթեցում սահող միջիններով,
- դինամիկ շարքի հարթեցում փոքրագույն քառակուսիների մեթոդով:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե հաշվարկները ճիշտ մեթոդով են կատարվում և եզրահանգումները հիմնավորված են:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ուսումնական և մեթոդական նյութեր, տեխնիկական միջոցներ, համակարգիչներ, վիճակագրական նյութեր՝ դինամիկ շարքերի տեսքով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՆՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**

**Մոդուլի դասիչը՝** ՄԵՆ-4-08-010

**Մոդուլի նպատակը՝**

Սովորողին տալ տնտեսագիտական և իրաբավանական ոլորտին առնչվող տարրական գիտելիքներ, ինչպես նաև հարկային օրենսդրության, հաշվապահական հաշվառման և ֆինանսական ոլորտի վերաբերյալ:

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա, մասնավորապես՝ կազմակերպել հաշվառում, կազմել առևտրային գործունեության հաշվետվություն, կանխատեսել և կառավարել կազմակերպության ծախսերը, մի խոսքով՝ օգտագործել իր գիտելիքները ՀՀ տնտեսության փոքր և միջին ձեռնարկությունները զարգացման համար:

**Մոդուլի տևողությունը՝** **144 ժամ**

**Տեսական ուսուցում** **86 ժամ**

**Գործնական պարապմունք** **58 ժամ**

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «ՄԵՆ-4-08-006- Կառավարում և առաջնորդում» մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները, տնտեսության շուկայական մեթոդները.

2. պատկերացում ունենա ՀՀ գործող ուղղակի և անուղղակի հարկերի մասին, կարողանա կազմակերպել հաշվառում, կազմել առևտրային գործունեության հաշվետվություն, կատարել հաշվապահական բնագավառին առնչվող հաշվարկներ.

3. իմանա ֆինանսական մենեջմենթի հիմունքները և դրույթները, կարողանա պլանավորել, կառավարել և վերլուծել ֆինանսական ռեսուրսները.

4. իմանա փոքր և միջին ձեռնարկությունների իրավատնտեսական դաշտի օրենքները և ստեղծման քայլերը. օրենսդրական և նորմատիվ ակտեր, կարգավորող ձեռներեցության գործունեությունը, կառավարման փաստաթղթավորման ապահովումը:

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.Իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները, տնտեսության շուկայական մեթոդները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա.ճիշտ է ներկայացնում տնտեսագիտության տեսության հիմնական դրույթները, մակրո- ու միկրոտնտեսության օրենքները.

բ.ճիշտ է նկարագրում անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները և խնդիրները,

գ. ճիշտ կիրառում տնտեսության շուկայական մեթոդները:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր տնտեսագիտության տեսության հիմնական դրույթների վերաբերյալ: Ուսանողին կներկայացնի որևէ օրինակ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ոլորտից: Կպահանջվի նկարագրել և վերլուծել օրինակում ներկայացված տնտեսական իրավիճակը, կիրառել տնտեսության շուկայական մեթոդները՝ հնարավոր լուծումների տարբերակները առաջարկելու համար: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում տրված հարցերին:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տնտեսագիտության տարրական դրույթների հասկացությունները, ինչպես նաև անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները և խնդիրները: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 22 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 12 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.Պատկերացում ունենալ ՀՀ գործող ուղղակի և անուղղակի հարկերի մասին, կարողանալ կազմակերպել հաշվառում, կազմել առևտրային գործունեության հաշվետվություն, կատարել հաշվապահական բնագավառին առնչվող հաշվարկներ:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ներկայացնում հարկերի տեսակները, դրանց առանձնահատկությունները,

բ. ճիշտ է ներկայացնում և դասակարգում ուղղակի և անուղղակի հարկերը,

գ.ճիշտ է կարողանում կատարել հաշվապահական հիմնական հաշվարկներ և գործողություններ,

դ. ճիշտ է կարողանում կազմակերպել հաշվառում,

ե. ճիշտ է կազմում առևտրային գործունեության հաշվետվություն:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր հարկերի տեսակների, հարկային դաշտի և դրանից բխող խնդիրների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ներկայացնել այդ ոլորտներում հաշվետվություններ

լրացնելու գիտելիքները: Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի հաշվարկել հարկերի գումարը և ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ: Կպահանջվի կազմել առևտրային գործունեության հաշվետվություն և գրավոր ձևով ներկայացնել այն պայմանական վերադաս ղեկավարին: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր: Ուսանողին կառաջադրվի ցուցադրել համապատասխան համակարգչային ծրագրերի (առևտրային և հաշվապահական) կիրառմամբ հաշվապահական հիմնական հաշվարկների ու գործողությունների կիրառման իր կարողությունը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը ճիշտ կպատասխանի բոլոր հարցերին և ճիշտ կկատարի տրված առաջադրանքները:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ ՀՀ գործող ուղղակի և անուղղակի հարկերի, հաշվապահական բնագավառին առնչվող հաշվարկների և հաշվետվությունների լրացման հստակ իմացություն: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական և նորմատիվատեխնիկական գրականություն, համապատասխան նորմատիվ փաստաթղթեր, առևտրային և հաշվապահական համակարգչային ծրագրեր, ինչպես նաև ձևաթղթեր, ձևաչափեր: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 22 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 16 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.Իմանալ ֆինանսական մենեջմենթի հիմունքները և դրույթները, կարողանալ պլանավորել, կառավարել և վերլուծել ֆինանսական ռեսուրսները**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա.ճիշտ է ներկայացնում ֆինանսական ռեսուրսների ներգրավման, բաշխման և կուտակման (կառավարման) միջոցները.

բ.ճիշտ է կազմում և ներկայացնում ֆինանսական ծրագրերը և հաշվետվությունները,

գ. ճիշտ է վերլուծում տարբեր ֆինանսական փաստաթղթերը:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր ֆինանսական միջոցների, ֆինանսական մենեջմենթի և ռեսուրսների օպտիմալ օգտագործման վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի կազմել ընթացիկ հաշվետվություն, հաշվարկել նախնական ֆինանսական միջոցների ներգրավման և բախշման վերաբերյալ ծախսերը և եկամուտները: Կհանձնարարվի հաշվարկել հիմնական ֆինանսական ցուցանիշները, այն են՝ շահույթը, ծախքերը և այլն, նաև օգտագործելով առևտրային և հաշվապահական համակարգչային ծրագրեր: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել ֆինանսական մենեջմենթի հիմունքները, ֆինանսական ռեսուրսների օպտիմալ և հստակ օգտագործումը ու կառավարումը կազմակերպության ստորաբաժանման ընթացիկ գործունեությունում: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսումնական գրականություն, առևտրային և հաշվապահական համակարգչային ծրագրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 20 ժամ

Գործնական պարապմունք՝ 14 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.Իմանալ փոքր և միջին ձեռնարկությունների իրավատնտեսական դաշտի օրենքները և ստեղծման քայլերը**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա.ճիշտ է ներկայացնում փոքր և միջին ձեռնարկությունների կազմակերպման իրավական առանձնահատկությունները.

բ. ճիշտ է ներկայացնում փոքր և միջին ձեռնարկությունների համար անհրաժեշտ փաստաթղթաշրջանառության կարգը.

գ.ճիշտ է ներկայացնում (պատկերացնում) կազմակերպության ներքո կատարվող աշխատանքները և կազմում ներկազմակերպական կարգուկանոնները և հրահանգները,

դ. իմանա հիմնական օրենքները և նորմատիվները, որոնցով գործում են փոքր և միջին ձեռնարկատիրությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր փոքր և միջին ձեռնարկությունների կազմակերպման իրավական պահանջների և օրենքների վերաբերյալ, ինչպես նաև ներքին նորմատիվների և հրահանգների կազմման եղանակների և միջոցների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի նաև ներկայացնել գիտելիքներ՝ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի և կատարվող աշխատանքների վերաբերյալ: Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ և հմտություններ փոքր և միջին ձեռնարկությունների իրավական առանձնահատկությունների վերաբերյալ (ստեղծում, գործունեության ծավալում, անհրաժեշտ փաստաթղթերի կազմում և օգտագործում): Օգտագործվելու են ուսուցողական տարբեր նյութեր, նորմատիվատեխնիկական և ուսումնական գրականություն, համապատասխան նորմատիվ փաստաթղթեր: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 22 ժամ

Գործնական պարապմունք՝ 16 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՆԵՋԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ»

**Մոդուլի դասիչը`** ՄԵՆ-4-08-011

**Մոդուլի նպատակը`**

Սովորողին տալ անհրաժեշտ գիտելիքներ մենեջերին վստահված գույքի, փաստաթղթերի և աշխատանքի համար անհրաժեշտ այլ նյութական արժեքների նկատմամբ ունեցած իր նյութական պատասխանատվության, ինչպես նաև ձևավորել մենեջերին վստահված նյութական արժեքների ընդունման, հանձնման և հաշվառման կարողություն: Այս մոդուլի շրջանակում ուսանողը նաև կսովորի կարգապահական պատասխանատվության ձևերը:

Ավարտելով այս մոդուլը` ուսանողը կկարողանա ապահովել իր պատասխանատվության տակ գտնվող նյութական արժեքների, վճարման փաստաթղթերի, ինչպես նաև գույքի և սարքավորումների պահպանումը և ճիշտ օգտագործումը, կատարել դրանց ընդունում, հանձնում ու հաշվառում, այնպես էլ պահպանել անհրաժեշտ վարքագիծը կարգապահական պատասխանատվություն չկրելու համար:

**Մոդուլի տևողությունը`** **72 ժամ**

**Տեսական ուսուցում** **42 ժամ**

**Գործնական պարապմունք** **30 ժամ**

**Մուտքային պահանջները`**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի « ՄԵՆ-4-08-010-Տնտեսաիրավական գիտելիքները և հմտությունները» մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները`**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա առևտրի մենեջերին վստահված գույքի և փաստաթղթերի նկատմամբ իր նյութական պատասխանատվության շրջանակը, սահմանված կարգի համաձայն` կատարի դրանց ընդունում, հանձնում, հաշվառում, պահպանում.

2. իմանա կարգապահական պատասխանատվության ձևերը և դեպքերը, որոնք բերում են այս կամ այն կարգապահական իրավախախտման.

**Գնահատման կարգը`**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.Իմանալ մենեջերին վստահված գույքի և փաստաթղթերի նկատմամբ իր նյութական պատասխանատվության շրջանակը, սահմանված կարգի համաձայն` կատարի դրանց ընդունում, հանձնում և հաշվառում, պահպանում**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`</u>

ա.ճիշտ է ներկայացնում մենեջերին վստահված գույքի, փաստաթղթերի և աշխատանքի համար անհրաժեշտ նյութական արժեքների նկատմամբ ունեցած իր նյութական պատասխանատվության, ինչպես նաև դրանց ընդունման, հանձնման և հաշվառման կարգը.

բ. կարողանում է պահպանել և ճիշտ օգտագործել մենեջերին վստահված գույքը.

գ. ճիշտ է կատարում վստահված գույքի, փաստաթղթերի և աշխատանքի համար անհրաժեշտ նյութական արժեքների ընդունումը, հանձնումը և հաշվառումը՝ սահմանված կարգի համաձայն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր մենեջերին վստահված գույքի, փաստաթղթերի և աշխատանքի համար անհրաժեշտ նյութական արժեքների նկատմամբ ունեցած իր նյութական պատասխանատվության, ինչպես նաև դրանց ընդունման, հանձնման և հաշվառման կարգի վերաբերյալ: Կպահանջվի կատարել որոշակի գույքի ընդունում, հանձնում և հաշվառում: Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ և հմտություններ մենեջերին վստահված գույքի, փաստաթղթերի և աշխատանքի համար անհրաժեշտ նյութական արժեքների նկատմամբ ունեցած իր նյութական պատասխանատվության, ինչպես նաև դրանց ընդունման, հանձնման և հաշվառման կարգի վերաբերյալ և ձևավորել այդ կարգը գործնականում: Ուսման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ և ցուցադրական տարբեր նյութեր, ուսումնական և նորմատիվատեխնիկական գրականություն, համապատասխան նորմատիվ փաստաթղթեր և հաշվառման փաստաթղթերի նմուշներ: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 24 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 18 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.Իմանալ կարգապահական պատասխանատվության ձևերը և դեպքերը, որոնք բերում են այս կամ այն կարգապահական իրավախախտման**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է պատկերացնում կարգապահական պատասխանատվության ձևերը.

բ.ճիշտ է ներկայացնում մենեջերին սպառնացող վարքագծային անկարգության դեպքերը, որոնք բերում են այս կամ այն կարգապահական իրավախախտման.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր կարգապահական պատասխանատվության ձևերի վերաբերյալ: Ուսանողին կներկայացվի որոշակի իրավիճակ կամ խնդիր և կպահանջվի, որ նա իրականացնի տվյալ օրինակի առողջ և կառուցողական քննադատություն: Կպահանջվի բերել օրինակներ դեպքերից, որոնք բերում են այս կամ այն կարգապահական իրավախախտման: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր, ուսումնական և նորմատիվատեխնիկական գրականություն, համապատասխան նորմատիվ փաստաթղթեր:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Տեսական ուսուցում 18 ժամ

Գործնական պարապմունք՝ 12 ժամ

<u>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆՅՈՒԹԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ԼՈԳԻՍՏԻԿԱ)»</u>

**Մոդուլի դասիչը՝** ՄԵՆ-4-08-012

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ապրանքների գնման, մատակարարման, փոխադրման և պահպանման կառավարման վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան ինֆորմացիոն և ֆինանսական հոսքերի կառավարման վերաբերյալ (մի խոսքով՝ լոգիստիկա):

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա օգտագործել գիտելիքներ լոգիստիկայի բնագավառից ծախքերի օպտիմալացման և արտադրության, իրացման և ուղեկցող ծառայության պրոցեսների ռացիոնալացման համար:

**Մոդուլի տևողությունը՝ 144 ժամ**

**Տեսական ուսուցում 90 ժամ**

**Գործնական պարապմունք 54 ժամ**

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «ՄԵՆ-4-08-010-Տնտեսաիրավական գիտելիքները և հմտությունները» մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա լոգիստիկայի հիմնական հասկացությունները, հետազոտության օբյեկտները, նպատակները և խնդիրները, հիմնական լոգիստիկական կոնցեպցիաները և համակարգերը, ինչպես նաև լոգիստիկայի զարգացման հեռանկարները,

2. իմանա լոգիստիկայի ուղղությունները, նրանց հետազոտության օբյեկտները և առանձնահատկությունները,

3. իմանա պահեստավորման տեղը և դերը լոգիստիկական համակարգում, պահեստավորման համակարգը, ինչպես նաև լոգիստիկական պահեստավորման էֆֆեկտիվ գործունեության պրոբլեմը,

4. կարողանա օգտագործել լոգիստիկայի գիտելիքները ապրանքների մատակարարման, իրացման և փոխադրման կազմակերպման նպատակով, նաև ապրանքների փոխադրման ծախքերի փոքրացման և իրացման գործընթացի օպտիմալացման համար:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.Իմանալ լոգիստիկայի հիմնական հասկացությունները, հետազոտության օբյեկտները, նպատակները և խնդիրները, հիմնական լոգիստիկական կոնցեպցիաները և համակարգերը, ինչպես նաև լոգիստիկայի զարգացման հեռանկարները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա.ճիշտ է ներկայացնում լոգիստիկայի միջոցով լուծվող հետազոտության օբյեկտները, նպատակները և խնդիրները, օգտագործում լոգիստիկայի հիմնական հասկացությունները,

բ.ճիշտ է ներկայացնում լոգիստիկայի հիմնական կոնցեպցիաները և համակարգերը,

գ.ճիշտ է ներկայացնում լոգիստիկայի զարգացումը որպես տնտեսագիտական ուղղության, լոգիստիկայի զարգացման հեռանկարները:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն հարցեր լոգիստիկայի հիմնական հասկացությունների, կոնցեպցիաների ու զարգացման հեռանկարների վերաբերյալ: Սովորողից կպահանջվի բերել օրինակ՝ նկարագրելով առևտրային կազմակերպությունում լոգիստիկայի բաժնի նպատակները, խնդիրները և զարգացման հեռանկարները: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսություննե րի և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 22 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 12 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.Իմանալ լոգիստիկայի ուղղությունները, նրանց հետազոտության օբյեկտները և առանձնահատկությունները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ներկայացնում լոգիստիկայի հիմնական ուղղությունների իմաստը,

բ.ճիշտ է ներկայացնում մատակարարման լոգիստիկայի հիմունքները, գնումների տեսակները, կարողանում է կազմակերպել մատակարարման պրոցեսը,

գ. ճիշտ է կարողանում սահմանել շուկայագիտության և իրացման լոգիստիկայի փոխկապակցվածությունը և տարբերությունը, իմանում ապրանքաշրջանառության բաշխիչ հոսքերը, ղեկավարել իրացման հոսքերը,

դ. ճիշտ է իմանում պաշարների տեսակները և պաշարների կառավարման հիմնական մոդելները, կառողանում հաշվառել մատակարարման և սպառման խախտումները լոգիստիկական համակարգում,

ե. ճիշտ է իմանում փոխադրման ֆունկցիաները և մեթոդները, կարողանում մշակել փոխադրման սխեմաները ծախքերի օպտիմալացման նպատակով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր լոգիստիկայի ուղղությունների և նրանց հետազոտության օբյեկտների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի ներկայացնել մատակարարման պրոցեսը: Ուսանողին կներկայացվի որոշակի իրավիճակ կամ խնդիր և կպահանջվի, որ նա առաջարկի տվյալ օրինակի առողջ և կառուցողական լուծումների տարբերակներ՝ իրացման հոսքերի ղեկավարման կարողությունը ցուցադրելու համար: Կհանձնարարվի հաշվառել մատակարարման և սպառման խախտումները, ինչպես նաև մշակել փոխադրման սխեմաները ծախքերի օպտիմալացման նպատակով: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու է ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 24 ժամ

Գործնական պարապմունք՝ 14 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.Իմանալ պահեստավորման տեղը և դերը լոգիստիկական համակարգում, պահեստավորման համակարգը, ինչպես նաև լոգիստիկական պահեստավորման էֆֆեկտիվ գործունեության պրոբլեմը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա.ճիշտ է ներկայացնում պահեստավորման տեղը և դերը լոգիստիկական համակարգում,

բ.ճիշտ է ներկայացնում պահեստավորման համակարգը, նրա մեջ մտնող բաղադրիչները,

գ. ճիշտ է նկարագրում լոգիստիկական պահեստավորման էֆֆեկտիվ գործունեության պրոբլեմը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր լոգիստիկական համակարգում պահեստավորման գործունեության վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի վերլուծել պահեստավորման համակարգը և առաջադրել անհրաժեշտ լուծումների տարբերակներ՝ էֆֆեկտիվ գործունեության համար: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական և նորմատիվատեխնիկական գրականություն, ձևաթղթեր, ձևաչափեր: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 22 ժամ

Գործնական պարապմունք՝ 12 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.Կարողանալ օգտագործել լոգիստիկայի գիտելիքները ապրանքների մատակարարման, իրացման և փոխադրման կազմակերպման նպատակով, նաև ապրանքների փոխադրման ծախքերի փոքրացման և իրացման գործընթացի օպտիմալացման համար:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է օգտագործում լոգիստիկական ընդհանուր գիտելիքները ապրանքների մատակարարման, իրացման և փոխադրման կազմակերպման նպատակով.

բ. ճիշտ է օգտագործում անհրաժեշտ մեթոդները, մոդելները և սխեմաները ապրանքների փոխադրման ծախքերի փոքրացման և իրացման գործընթացի օպտիմալացման համար.

գ. ճիշտ է կառավարում ֆինանսական և ինֆորմացիոն հոսքերը ապրանքների պատշաճ մատակարարման, իրացման և փոխադրման ապահովման համար:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողից կպահանջվի կազմել ապրանքների մատակարարման, իրացման և փոխադրման սխեմաներ, գրաֆիկներ, պարզաբանել դրանց, և առաջարկել ապրանքների փոխադրման ծախքերի փոքրացման միջոցները ու մեթոդները: Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու է ուսումնական գրականություն: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առևտրային կազմակերպություններում: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Տեսական ուսուցում 22 ժամ

Գործնական պարապմունք՝ 16 ժամ

## <u>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ՄԵՐՉԵՆԴԱՅԶԻՆԳ)»</u>

**Մոդուլի դասիչը՝** ՄԵՆ-4-08-013

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին ուսուցանել առևտրային գործունեության կառավարման տարրերը, մասնավորապես մանրածախ և մեծածախ առևտրի մերչենդայզինգի կարճ և մատչելի ձևով պրակտիկայից

կոնկրետ օրինակների վրա՝ գնումների և վաճառքների պլանավորում և կառավարում; տեղաբաշխման, ապրանքների գների և քանակության հսկում; և այլն:

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա կառավարել ապրանքի առաջմղման համակարգը վաճառքների տեղում, այն է՝ արտադրության պահանջարկի բարձրացում; սպարողների մոտ ամբողջ տեսականուց որոշակի ապրանքի ընտրության և գնման ցանկության առաջացում; առևտրի սրահի, առևտրային կազմակերպությունի, ապրանքի կամ բրենդի և այլնի նկատմամբ գնորդի ուշադրության գրավում:

**Մոդուլի տևողությունը՝ 144 ժամ**

**Տեսական ուսուցում 72 ժամ**

**Գործնական պարապմունք 72 ժամ**

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «ՄԵՆ-4-08-008-Շուկայագիտության հիմունքները» մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա առևտրային գործունեության կառավարման հիմունքները, մասնավորապես մերչենդայզինգի հիմնական հասկացողությունները, նպատակները և խնդիրները, նրա նշանակությունը և նրա միջոցով առևտրի կազմակերպման ժամանակ հասանելիք արդյունքները,
2. իմանա առևտրի սրահի հանդեպ գնորդի ուշադրության գրավման մեթոդները և գործիքները,
3. իմանա ապրանքի հանդեպ գնորդի ուշադրության գրավման մեթոդները և գործիքները,
4. կարողնա օգտագործել առևտրային գործունեության վերաբերյալ գիտելիքները և կարողությունները վաճառքների խթանման համար:

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.Իմանալ առևտրային գործունեության կառավարման հիմունքները, մասնավորապես մերչենդայզինգի հիմնական հասկացողությունները, նպատակները և խնդիրները, նրա նշանակությունը և նրա միջոցով առևտրի կազմակերպման ժամանակ հասանելիք արդյունքները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ներկայացնում մերչենդայզինգի հիմնական հասկացողությունները, նպատակները և խնդիրները,

բ. ճիշտ է մերչենդայզինգի նշանակությունը և նրա միջոցով առևտրի կազմակերպման ժամանակ հասանելիք արդյունքները,

գ. ճիշտ է նկարագրում մերչենդայզինգի ստորաբաժանման փոխկապակցվածությունը առևտրային կազմակերպության ուրիշ ծառայությունների հետ, նրա դերը և ֆունկցիաները:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր մերչենդայզինգի հիմնական հասկացողությունների, նպատակների, խնդիրների և նշանակության վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի վերլուծել պայմանական առևտրային կազմակերպության նպատակները և խնդիրները մերչենդայզինգի հետ կապված: Սովորողին կտրամադրվեն կազմակերպության (իրական կամ մտածված) տվյալներ և կհանձնարարվի գնահատել մերչենդայզինգի միջոցով հասանելիք արդյունքները: Գրավոր կամ բանավոր կառաջադրվի ներկայացնել մերչենդայզինգի ստորաբաժանման փոխկապակցվածությունը առևտրային կազմակերպության ուրիշ ծառայությունների հետ, հիմնավորել նրա դերը և ֆունկցիաները: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր: Ուսանողից կպահանջվի ցուցադրել համապատասխան համակարգչային առևտրային ծրագրերի կիրառմամբ մերչենդայզինգի միջոցով հասանելիք արդյունքների մոդելավորման իր կարողությունը:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն, համակարգչային ծրագրեր, սեմինարներ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում | 18 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 14 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.Իմանալ առևտրի սրահի հանդեպ գնորդի ուշադրության գրավման մեթոդները և գործիքները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա.ճիշտ է ներկայացնում թե ինչպես է պետք պլանավորել առևտրային կետը, սրահը,

բ. ճիշտ է ներկայացնում թե ինչպես է պետք դասավորել առևտրային կետի, սրահի բաժինները,

գ.ճիշտ է ներկայացնում թե ինչպես է պետք ձևավորել առևտրային կետը, սրահը,

դ. ճիշտ է իմանում թե ինչպիսին պետք է լինեն առևտրային սարքավորումները և դիզայնը:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակներ (օրինակներ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրանց նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր և լուսանկարներ, ուսումնամեթոդական գրականություն, հաճախորդի մոտ առաջացող հնարավոր խնդիրները պարունակող հատուկ քարտեր, սեմինարներ, "ուղեղային գրոհի" մեթոդ: Գործնական

պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առևտրային կազմակերպություններում: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 20 ժամ

Գործնական պարապմունք՝ 18 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.Իմանալ ապրանքի հանդեպ գնորդի ուշադրության գրավման մեթոդները և գործիքները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում թե ինչպիսի ապրանք որտեղ տեղավորել,

բ. ճիշտ է ներկայացնում թե ինչպես ընդգծել և լուսավորել ապրանքը,

գ. ճիշտ է նկարագրում թե ինչպես է պետք խուսափել առևտրային կետում ապրանքի բացակայությունից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակներ (օրինակներ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրանց նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր և լուսանկարներ, ուսումնամեթոդական գրականություն, հաճախորդի մոտ առաջացող հնարավոր խնդիրները պարունակող հատուկ քարտեր, սեմինարներ, "ուղեղային գրոհի" մեթոդ: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առևտրային կազմակերպություններում: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 20 ժամ

Գործնական պարապմունք՝ 18 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.Կարողնալ օգտագործել առևտրային գործունեության վերաբերյալ գիտելիքները և կարողությունները վաճառքների խթանման համար:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է օգտագործում ապրանքաշրջանառության պլանավորման գործիքները,

բ. ճիշտ է մշակում մերչենդայզինգի պլանները և չափանիշները,

գ. ճիշտ է ներկայացնում առևտրային գործունեության կառավարման գործընթացը,

դ. ճիշտ է կարողանում ղեկավարել առևտրային գործունեությունը, տիրապետում տրված գործունեության ընդլայման մեթոդներին և գործիքներին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակներ (օրինակներ), կպահանջվի մշակել մերչենդայզինգի պլանը և չափանիշները, նկարագրել առևտրային գործունեության կառավարման գործընթացը: Կպահանջվի նկարագրել գրավոր կամ բանավոր առևտրային գործունեության ընթացքը՝ ղեկավարման, գործունեության ընդլայման և կանխատեսման կարողությունները բացահայտման համար, նաև համապատասխան համակարգչային առևտրային ծրագրերի կիրառմամբ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեստեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են դիդակտիկ նյութեր, առևտրային համակարգչային ծրագրեր, սեմինարներ: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առևտրային կազմակերպություններում:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Տեսական ուսուցում 14 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 22 ժամ

<u>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ՌԻՍԿ-ՄԵՆԵՋՄԵՆԹ)»</u>

**Մոդուլի դասիչը՝** ՄԵՆ-4-08-014

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ռիսկերի և անորոշությունների տիպերի, նրանց հասկացողությունների միջև տարբերությունների մասին, շուկայական տնտեսությունում նրանց նշանակության և ազդեցության մասին առևտրային կազմակերպությունների վրա, ինչպես նաև գիտելիքներ ռիսկերի հայտնաբերման և գնահատման միջոցների, ռիսկերի կրճատման համար կառավարման մեթոդների ու գործիքների ընտրության մասին:

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա որոշել, վերլուծել և գնահատել ռիսկերը, մշակել ճգնաժամային իրավիճակների հետևանքների լուծարման միջոցառումների կանխորոշիչ ծրագիր, մշակել անորոշությունների իրավիճակներում գոյատևելու մեխանիզմները, օգտագործել ռիսկերի դեմ ապահովագրական համակարգերը, կանխատեսել առևտրային կազմակերպության զարգացումը հաշվի առնելով իրադրության մեջ հնարավոր փոփոխությունները և այլ միջոցառումներ:

**Մոդուլի տևողությունը՝** **144 ժամ**

**Տեսական ուսուցում** **82 ժամ**

**Գործնական պարապմունք** **62 ժամ**

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «ՄԵՆ-4-08-010-Տնտեսաիրավական գիտելիքները և հմտությունները» մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա ռիսկ-մենեջմենթի հիմնական հասկացողությունները, ուսումնասիրության օբյեկտները, տարրերը, նպատակները և խնդիրները,

2. իմանա ռիսկերի և անորոշությունների միջև տարբերությունները, նրանց հիմնական գծերը, էությունը, գործոնները, ֆունկցիաները, պատճառները,

3. կարողանա որոշել և կանխորոշել ռիսկերի հայտնվելը, նկարագրել նրանց նշանակությունը և ազդեցությունը առևտրային կազմակերպությունների վրա, հնարավոր կորուստները նրանց պատճառով, և մշակել միջոցառումներ առևտրային կազմակերպությունների վրա նրանց ազդեցության կանխարգելելու նպատակով,

4. կարողանա կառավարել ռիսկերը:

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.Իմանալ ռիսկ-մենեջմենթի հիմնական հասկացողությունները, ուսումնասիրության օբյեկտները, տարրերը, նպատակները և խնդիրները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ներկայացնում ,ռիսկ-մենեջմենթիե հասկացողության իմաստը, ռիսկերի կառավարման հիմքը,

բ.ճիշտ է ներկայացնում ռիսկ-մենեջմենթի ուսումնասիրության օբյեկտները, տարրերը,

գ.ճիշտ է ներկայացնում ռիսկ-մենեջմենթի նպատակները և խնդիրները:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողից կպահանջվի ներկայացնել “ռիսկ-մենեջմենթի” հասկացողության իմաստը, օբյեկտները, նպատակները և խնդիրները: Կհանձնարարվի բերել օրինակներ՝ ռիսկ-մենեջմենթի նպատակները և խնդիրները ցուցադրելու համար: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում կիրառվելու է ուսումնական գրականություն:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Տեսական ուսուցում՝ 22 ժամ

Գործնական պարապմունք՝ 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.Իմանալ ռիսկերի և անորոշությունների միջև տարբերությունները, նրանց հիմնական գծերը, էությունը, գործոնները, ֆունկցիաները, պատճառները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է տարբերակում ռիսկը անորոշությունից, և նրանց հիմնական գծերը,

բ.ճիշտ է ներկայացնում ռիսկի և անորոշության հայտնման էությունը ու պատճառները,

գ. ճիշտ է տարբերակում ռիսկի գործոնները, կարողանում անցկացնել ֆակտորային վերլուծություն,

դ. ճիշտ է իմանում ռիսկերի ֆունկցիաները ու նրանց հետ կապված տեսանկյունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կտրվեն հարցեր ռիսկերի և անորոշությունների տարբերությունների և փոխկապակցությունների վերաբերյալ: Ուսանողին կներկայացվի իրավիճակ/խնդիր, կպահանջվի դա վերլուծել, հայտաբերել պատճառները, ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ՝ կիրառելով ֆակտորային վերլուծություն: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու է ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 22 ժամ

Գործնական պարապմունք՝ 16 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.Կարողանալ որոշել և կանխորոշել ռիսկերի հայտնվելը, նկարագրել նրանց նշանակությունը և ազդեցությունը առևտրային կազմակերպությունների վրա, հնարավոր կորուստները նրանց պատճառով, և մշակել միջոցառումներ առևտրային կազմակերպությունների վրա նրանց ազդեցությունը կանխարգելելու նպատակով:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա.ճիշտ է ներկայացնում ռիսկերի որոշման և հայտնաբերման մեթոդները և տեխնոլոգիաները,

բ.ճիշտ է նկարագրում ռիսկերի և անորոշության նշանակությունը և ազդեցությունը առևտրային կազմակերպությունների վրա, հնարավոր կորուստները նրանց պատճառով,

գ. ճիշտ է ներկայացնում ռիսկերի հայտնաբերման կանխորոշման մեթոդները (սոցիալ-տնտեսական, վիճակագրական, փորձագիտական), ինչպես նաև կանխորոշման մեթոդների օգտագործման հետ կապված խնդիրները ռիսկերի պայմաններում,

դ. ճիշտ է ընդունում որոշումներ ռիսկերի կանխորոշման վերաբերյալ (այդ թվում ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներ օգտագործելով),

ե. ճիշտ է մշակում առևտրային կազմակերպությունների վրա ռիսկերի և անորոշությունների ազդեցության կանխարգելելու միջոցներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Ուսանողին կներկայացվի իրավիճակ (օրինակ), կպահանջվի որոշել և կանխորոշել ռիսկերը՝ կիրառելով հայտնաբերման ու կանխորոշման մեթոդները և տեխնոլոգիաները, սահմանել հնարավոր

կորուստները նրանց պատճառով, ցուցադրել նրանց ազդեցությունը առևտրային գործունեության վրա: Կհանձնարարվի առաջարկել որոշումներ ռիսկերի կանխորոշման վերաբերյալ՝ ներկայացնելով որոշումների ընդունման իր կարողությունը: Հնարավոր է նաև օգտագործել համապատասխան համակարգչային ծրագրեր: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են ուսումնական գրականություն, համապատասխան համակարգչային ծրագրեր, սեմինարներ: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առևտրային կազմակերպություններում:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 22 ժամ |
| Գործնական պարապմունք՝ | 16 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.** Կարողանալ կառավարել ռիսկերը:

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա.ճիշտ է վերլուծում և գնահատում հնարավոր և հայտնված ռիսկերը և անորոշությունները,

բ. ճիշտ է ընտրում ռիսկերի կառավարման ըմբռնումը և ռազմավարությունը,

գ.ճիշտ է ընտրում ռիսկերի կառավարման մեթոդները (ռիսկերի կանխարգելում, կրճատում, տեղափոխում, պահում), եղանակները, մոտեցումները, միջոցառումները,

դ. ճիշտ է ընտրում ռիսկերի ապահովագրման և տեղաբաշխման միջոցները երրորդ անձի վրա ռիսկի տեղափոխման մեթոդի դեպքում,

ե. ճիշտ է կազմակերպում առևտրային կազմակերպությունում ռիսկ-մենեջմենթի համակարգը,

զ. ճիշտ է հսկում առևտրային ռիսկերի կառավարման համակարգը և անհրաժեշտության դեպքում ներմուծում փոփոխություններ:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ</u>

Ուսանողին կներկայացվի աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի վերլուծել և գնահատել հնարավոր և հայտնված ռիսկերը և անորոշությունները, ընտրել ռիսկերի կառավարման մեթոդները, մոտեցումները և միջոցառումները: Կառաջադրվի կազմակերպել ռիսկ-մենեջմենթի համակարգը պայմանական առևտրային կազմակերպությունում և հայտաբերել պայմանները ու գործոնները նրա էֆեկտիվ աշխատելության համար: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեսթային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում կիրառվելու են սեմինարներ և այլ վիճաբանական մեթոդներ: Գործնական պարապմունքների որոշ մասը կարող է անցկացվել առնտրային կազմակերպություններում:

**<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>**

Տեսական ուսուցում՝ 16 ժամ

Գործնական պարապմունք՝ 20 ժամ